| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Մարկարյան Ռ.Վ., Ջանջուղազյան Ն.Ա., Օհանջանյան Մ.Մ., Հարությունյան Ա.Ա., Հարությունյան Վ.Ս., Բաղդասարյան Լ.Լ., Հայրաթյան Ռ.Ց., Վարդանյան Զ.Հ., «Քաղպաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր», Երևանի համալս. հրատ., 2006, 238 էջ:<br>2. Հեղինակների կոլեկտիվ, «Մինչբժշկական օգնությունը բնակչությանը արտակարգ իրավիճակներում», ուսումնական ձեռնարիկ, Երևանի համալս. հրատ., 2007, 224 էջ:<br>3. Կ.Ա. Մանասյան, «Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցումը» (ուսումնամեթոդական աշխատանք), Եր., Երևանի համալս. հրատ., 2007, 44 էջ:<br>4. Մ.Խ.Ադամյան, «Փոխադրական անշարժացում», ուսումնամեթոդական աշխատանք, Եր., Երևանի համալս. հրատ., 2011, 36 էջ:<br>5. Ս.Ա.Մանուկյան, Գ.Հ.Ճաղարյան, «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցեր», ուսումնական ձեռնարկ, Եր., Երևանի համալս. հրատ., 2017 |

| | | |
|---|---|---|
| **1. 0104/B11** | 2.Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք | **3. 2 ECTS** կրեդիտ |

| | |
|---|---|
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 15/15/0** |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7. Ստուգարք** |

**8. Դասընթացի նպատակն է՝** ծանոթացնել կիրառական վիճակագրության հիմնական մեթոդների հետ, սովորեցնել ուսանողներին կիրառել վիճակագրության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, ծանոթացնել ուսանողներին կիրառական վիճակագրության տարբեր բաժինների հետ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*

1. Ձևակերպելու վիճակագրական խնդիրներ:
2. Կառուցելու նմուշին համապատասխան հաճախությունների սյունապատկերը:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Վերլուծելով առկա տվյալները՝ կատարելու վիճակագրական հետևություններ:
2. Ստանալու տարբեր բնութագրիչների գնահատականներ:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Համակարգելու և վերլուծելու ստացված տեղեկատվությունը և կատարելու հետևություններ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ2.**պլանավորելու, մշակելու, վերլուծելու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

**Բ3.**կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. գործնական պարապմունք
3. 3. ինքնուրույն խատանքներ

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

*Ստուգարքն* անց է կացվում բանավոր:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Նկարագրական վիճակագրություն: **Թեմա 2.** Նմուշային եղանակ: **Թեմա 3.** Գնահատման տեսություն: **Թեմա 4.** Միջակայքային գնահատականներ:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Ահարոնյան Ն., Իսրայելյան Ե., Հավանականությունների տեսության խնդրանգիրք, ԵՊՀ, Երևան, 2016.
2. Գասպարյան Կ.Վ., Վիճակագրության խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Երևան, 2017:
3. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, 2000:
4. Ивченко Г. И., Медведев Ю. И., Математическая статистика, кн. дом Либроком, М., 2014.


| | | |
|---|---|---|
| **1. 0304/B12** | **2. Իրավունքի հիմունքներ** | **3. 2 ECTS կրեդիտ** |
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7. Ստուգարք** | |

8. ***Դասընթացի նպատակն է՝*** ուսանողին սովորեցնել հասարակական կյանքի տարբեր ոլորտների օրենսդրական կարգավորման հիմունքները, ստացված իրավական գիտելիքները գործնականում կիրառելու հմտություններ, ինչպես նաև ձևավորել իրավական աշխարհայացք ու մշակույթ:

<u>**Դասընթացի խնդիրները.**</u>

- Ձևավորել կայուն գիտելիքներ իրավունքի տեսության և իրավունքի առանձին ճյուղերի վերաբերյալ:
- Ձևավորել մասնագիտական գործունեության մեջ նորմատիվ իրավական ակտերի, իրավաբանական փաստաթղթերի կիրառման կարողություններ ու ունակություններ:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

3. Սահմանելու իրավագիտության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, ինստիտուտները և տերմինները:
4. Ներկայացնելու հայկական իրավունքի և օրենսդրության համակարգի կառուցվածքը, իրավական նորմերի առանձնահատկությունները և նրանց տեսակները, նորմատիվ իրավական ակտերի համակարգը:
5. Մեկնաբանելու իր մասնագիտական ոլորտում իրավաբանական տերմինաբանությունը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

6. Կիրառելու իրավական ակտերը, իրավաբանական փաստաթղթերը իր մասնագիտական գործունեության մեջ:
7. Վերլուծելու իրավական նորմը՝ այն կիրառելով կոնկրետ իրավիճակներում:
8. Վերլուծելու և համակարգելու իրավական տեղեկատվությունը:

10. **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ4.**ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

11. **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. ռեֆերատ
3. 3. զեկուցում:

12. **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

*Ստուգարք.* Նախապես տրված հարցաշարից անց է կացվում բանավոր հարցում:

13. **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Պետության և իրավունքի տեսություն: **Թեմա 2.** Սահմանադրական իրավունք: **Թեմա 3.** Քաղաքացիական իրավունք: **Թեմա 4**. Քրեական իրավունք: **Թեմա 5**. Աշխատանքային իրավունք: **Թեմա 6**. Ընտանեկան իրավունք: **Թեմա 7**. Տեղական ինքնակառավարում: **Թեմա 8**. Վարչական իրավունք: **Թեմա 9.** Դատավարական իրավունք: **Թեմա 10**. Արդարադատություն, դատախազություն և նոտարիատ: **Թեմա 11**. Կրթության, գիտության, մշակույթի և սոցիալական ոլորտի ՀՀ օրենսդրություն: **Թեմա 12**. Միջազգային իրավունք:

14. **Հիմնական գրականության ցանկ.**


1. Այվազյան Վ., Մարդու իրավունքներ, Երևան, 2002:
2. Առաքելյան Ս., Գաբուզյան Ա., ՀՀ քրեական իրավունք, Երևան, 2003,2006:
3. Բարսեղյան Տ., ՀՀ Քաղաքացիական իրավունք, Երևան, 2000:
4. Դիլբանդյան Ա., ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 1999:
5. Ղարախանյան Գ., Ընտանեկան իրավունք, Երևան, 2001:
6. Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002:


| | | |
|---|---|---|
| **1. 0304/B13** | **2. Փիլիսոփայության հիմունքներ** | **3. 4 ECTS կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5. 30/0/30** | |
| **6. 4-րդ կիսամյակ** | **7. Ստուգարք** | |

8. ***Դասընթացի նպատակն է՝*** ներկայացնել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները, կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները, որոնք թույլ են տալիս կերտել ազգային նկարագրով և գիտական աշխարհայացքով զինված մարդ, ձևավորել փիլիսոփայական մտածողության այն մակարդակը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր կրթված և լավ մասնագետի համար:

**Դասընթացի խնդիրները.**

- Բացահայտել փիլիսոփայության հիմնական օրենքները, կատեգորիաներն ու սկզբունքները:
- Բացատրել կեցության և իմացության էությունը, հիմնական ձևերն ու նրանց զարգացման օրինաչափությունները:
- Հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել ուսանողի համակարգված աշխարհայացքի, քաղաքակրթական զարգացումների, արդի միտումներին և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին պատկերացումների ձևավորմանը:

9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու կեցության համընդհանուր օրենքները, կատեգորիաները, հիմնական ձևերն ու առանձնահատկությունները:
2. Բացահայտելու ճանաչողության, գիտության էության առանձնահատկությունները:
3. Ներկայացնելու աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի փիլիսոփայական հայեցակարգի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները, ճշմարտության և մոլորության, գիտելիքների և հավատի, ռացիոնալ և իռացիոնալ սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Տարբերելու գիտականը ոչ գիտականից, ճշմարիտը կեղծից, էականը ոչ էականից:
2. Վերլուծելու հասարակական կյանքում տեղի ունեցող գործընթացները և դրանց պատճառահետևանքային կապերը:
3. Կողմնորոշվելու մարդ-մարդ և մարդ-բնություն փոխհարաբերություններում:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Տեղին և ժամանակին գործածելու փիլիսոփայական մտածողության կոնցեպտուալ ապարատը:

**9. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ4.**ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

**Գ4.**օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը:

11. **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. սեմինար
3. քննարկում
4. զեկուցում
5. ռեֆերատ

12. **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Ստուգարք.*** Նախապես տրված հարցաշարի շրջականում անցկացվում է բանավոր հարցում:

13. **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Փիլիսոփայության առարկան: **Թեմա 2.** Կեցություն և մատերիա: **Թեմա 3.** Դիալեկտիկա: **Թեմա 4.** Բնություն: **Թեմա 5.** Մարդ և պրակտիկա: **Թեմա 6.** Գիտակցություն և ճանաչողություն: **Թեմա 7.** Գիտություն: **Թեմա 8**. Հասարակություն:

14. **Հիմնական գրականության ցանկ.**


1. Դավիթ Անհաղթ, Երկեր, Երևան, 1980:
2. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 1, Երևան, 1987:
3. Բրուտյան Գ., Իմաստասիրական երկխոսություններ, Հ. 2, Երևան, 1987:
4. Գաբրիելյան Հ., Հայ փիլոփայության պատմություն, Երևան, 1980:
5. Կյուրեղյան Է., Փիլիսոփայություն, Երևան, 2004:

| |
|---|
| 6. Փիլիսոփայության բառարան, Երևան, 1975: |

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ /ԿԱՄԸՆՏՐԱԿԱՆ/

| **1. 0303/B17** | **2.Բարոյագիտության հիմունքներ** | **3.2 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4.2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7. ստուգարք** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ներկայացնել բարոյականության տեսության հիմնահարցերը, ամբողջացնել բարոյականության մասին սովորողի պատկերացումները, բարձրացնել բարոյական գիտակցությունը և համաշխարհայնացման արդի ժամանակաշրջանում նպաստել ուսանողի բարոյափիլիսոփայական աշխարհայացքի ձևավորմանը:

**Դասընթացի խնդիրները.**

1. Ծանոթացնել բարոյագիտության հիմնական հասկացություններին, բարոյական առաջընթացի էությանն ու չափանիշներին, բարոյականության էությանը, կառուցվածքային բաղադրիչներին, յուրահատկությանը, գործառույթներին, բարոյականության և ազատության հարաբերությանը, ազգային ու համամարդկային բարոյամշակութային արժեքներին, բարոյական արժեհամակարգին:
2. Ցույց տալ ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
3. Նպաստել անձի բարոյական մտահաղորդակցության ձևավորմանը:
4. Բացահայտել բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
5. Վերլուծել բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:
6. Ընդլայնել սովորողների մտահորիզոնը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Սահմանելու բարոյագիտության հիմնական հասկացությունները, բարոյական առաջընթացի էությունը ու չափանիշները:
2. Արժևորելու ազգային և համամարդկային բարոյամշակութային արժեքները, բարոյական արժեհամակարգը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ցույց տալու ճշմարտության, արդարության, ազատության, բարու և գեղեցիկի կապը կյանքի նպատակի և իմաստի հիմնահարցերին:
2. Բացահայտելու բարոյական իդեալի էությունը ազգայինի և համամարդկային տեսանկյունից:
3. Վերլուծելու բարոյականություն հասկացության տարբեր սոցիալ-մշակութային մեկնաբանությունները:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

**Բ3.**կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ

| |
|---|
| 3. զեկուցումներ |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>*Ստուգարք.* Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**<u>Բաժին 1.</u> Բարոյագիտության հիմնական կատեգորիաները. Թեմա 1.** Հասկացություն բարոյագիտության կատեգորիաների մասին: **Թեմա 2.** Բարին և չարը: **Թեմա 3.** Պարտք և պատասխանատվություն: **Թեմա 4.** Պատիվ և արժանապատվություն: **Թեմա 5.** Խիղճ: Բարոյական իդեալ: **Թեմա 6.** Կյանքի իմաստն ու նպատակը: **Թեմա 7.** Երջանկություն. Սեր: **<u>Բաժին 2.</u> Բարոյականության էությունը, կառուցվածքային բաղադրիչները, յուրահատկությունը և գործառույթները: Թեմա 8.** Բարոյականության էությունը, յուրահատկությունը և կառուցվածքային բաղադրիչները: **Թեմա 9.** Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: **<u>Բաժին 3.</u> Բարոյականություն և ազատություն: Թեմա 10.** Անձը և համակեցությունը: **Թեմա 11.** Բարոյականության հասարակական խնդիրները: **<u>Բաժին 4.</u> Անձի բարոյական գիտակցությունը: Թեմա 12.** Անձի բարոյական գիտակցությունը: **Թեմա 13.** Անձի բարոյական գործունեությունը: **Թեմա 14.** Անձի բարոյական հարաբերությունները: **Թեմա 15.** Անձի բարոյական մշակույթը: **<u>Բաժին 5.</u> Համամարդկային բարոյական արժեքներ և ազգային բարոյական նկարագիր: Թեմա 16.** Ժողովրդավարության և մարդու իրավունքների վերաիմաստավորումը եվրոպական բարոյամշակութային արժեհամակարգի համատեքստում: **Թեմա 17.** Ազգային-բարոյական նկարագիր: **<u>Բաժին 6.</u> Բարոյագիտության կիրառական խնդիրներ: Թեմա 18.** Կիրառական բարոյագիտություն: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. А. Разин, Этика, Москва, 2003.<br>2. О. Дробницкий, Понятие морали, Москва, 2004.<br>3. Дж. Мур, Прунципы этики, Москва, 1984.<br>4. Этика, Учебник под. Ред. А. Гусейнова и Е. Дубко, Москва, 2000.<br>5. Словарь по этике. |

| | | |
|---|---|---|
| **0105/B17** | **Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր** | **2 ECTS կրեդիտ** |
| **2 ժամ/շաբ.** | **30/0/0** | |
| **4–րդ կիսամյակ** | Ստուգարք | |
| **Դասընթացի նպատակն է՝** հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական մասնագիտությունների ներկայացուցիչներին բնագիտական գրագիտության հիմունքներին 21-րդ դարի մակարդակով ծանոթացնելն է: Այն պիտի առաջին հերթին ապագա մտավորականին ուսանի բնագիտության, մաթեմատիկայի և հումանիտար գիտությունների ուսումնասիրման առարկաների ու մեթոդոլոգիայի ընդհանրություններին ու տարբերություններին, որ նման մտավորականն իր հետագա գործունեության ընթացքում հնարավորին չափ քիչ ենթարկվի զանազան մոլորություններին, նախապաշարմունքներին ու սնահավատություններին: Դասընթացի ուսումնասիրման ընթացքում կներկայացվի ժամանակակից բնագիտությունը համապիտանի մեթոդների և օրենքների ամբողջության մեջ՝ ցուցադրելով շրջապատող աշխարհի ճանաչման ռացիոնալ մեթոդի առանձնահատկությունը, բնագիտության տրամաբանությունը և կառուցվածքը:<br>**Դասընթացի խնդիրներն են՝**<br>1. Ձևավորել բնագիտական աշխարհայացք:<br>2. Ծանոթացնել բնագիտության զարգացման պատմությանը:<br>3. Բացատրել բնության համակարգերի կազմավորման, կառուցվածքի և զարգացման օրինաչափությունները:<br>4. Ուսանողներին ծանոթացնել բնագիտության զարգացման ներկա միտումներին: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*** | | |

1. Ներկայացնելու բնագիտության զարգացման փուլերը:
2. Ներկայացնելու բնագիտության հիմնական սկզբունքները:
3. Բնութագրելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. Կիրառելու բնության համակարգերի կառուցվածքի, զարգացման ընդհանուր սկզբունքների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքները տարբեր հետազոտություններում:
2. Կատարելու հաշվարկներ որոշակի գործընթացների վերաբերյալ և տալ որակական ու քանակական գնահատական բնության երևույթների վերջնական արդյունքների մասին:
3. Կատարելու համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Թիմային աշխատանքի ընթացքում հստակ ներկայացնելու սեփական միտքը:
2. Օգտվելով տարբեր աղբյուրներից կատարելու վերլուծություններ և դասակարգելու ստացած ինֆորմացիան:
3. Ստեղծագործելու՝ պահպանելով մասնագիտական էթիկայի նորմերը:

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.**

**Բ4.**ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. խոսքային մեթոդները (դասախոսումը, բացատրումը, պատմումը, զեկուցումը),
2. գործնական մեթոդները (վարժությունների և տնային առաջադրանքի կատարումը),
3. տրամաբանական մեթոդները (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիա),
4. ճանաչողական-ստեղծագործական մեթոդները (բացատրական - ցուցադրական, պրոբլեմային - որոնողական),
5. համագործակցային ուսուցման մեթոդները (թիմային և խմբային աշխատանքներ),
6. քննադական մտածողության մեթոդները,
7. խմբային աշխատանքի մեթոդները,
8. ինքնուրույն աշխատանքի մեթոդները,
9. վերահսկողության մեթոդները (գրավոր և բանավոր, պլանավորված և ոչ պլանավորված վերահսկողություն):

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Ստուգարք**. Ուսանողին տրվում է ինքնուրույն աշխատանք ռեֆերատի տեսքով՝ դասընթացին վերաբերվող: Տրվում է ռեֆերատը բանավոր և ժամանակակից մեթոդներով ներկայացնելու հնարավորություն, եթե ուսանողը ինքնուրույն աշխատանքը ներկայացնում է դրսևորելով անհրաժեշտ վերջնարդյունքի 50 տոկոսից ավելին նա ստանում է ստուգված:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1.** Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ առարկայի նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդները և զարգացման հիմնական փուլերը: **Թեմա 2.** Բնագիտական և հումանիտար մշակույթներ: Աշխարհի մեխանիկական, էլեկտրամագնիսական և ժամանակակից պատկերները: **Թեմա 3.** Նյութի կառուցվածքի կոնցեպցիաները: Միկրոաշխարհի կառուցվածքների և փոխազդեցությունների կոնցեպցիաները: Տարրական մասնիկները: Հիմնարար փոխազդեցությունները: **Թեմա 4.** Հարաբերականության հատուկ և ընդհանուր սկզբունքները: Անորոշությունը աշխարհում: Անորոշությունների առնչություն: Լրացման սկզբունք: **Թեմա 5.** Աստղերի, մոլորակների և տիեզերքի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները: **Թեմա 6.** Կենդանի նյութի ձևերը, հատկությունները և կազմավորման մակարդակները: **Թեմա 7.** Էվոլյուցիոն կենսաբանության կո-

| |
|---|
| նցեպցիաները: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ալանյան Լ., Բնագիտության ժամանակակից կոնցեպցիաներ, ԵՊՀ, Երևան, 2007:<br>2. Канке В.А.,Концепции современного естествознания, Логос. Москва, 2002.<br>3. Концепции современного естествознания Питер 2008 , (Под. редакц. Л. А. Михайлова). |

| **1. 0201/B17** | **2.Գործարարության հիմունքներ** | **3.2 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4.2ժամ/շաբ.** | **5.30/0/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Ստուգարք** | |

**8.Դասընթացի նպատակն է** հաղորդել ներկայիս տնտեսական պայմաններում գործարարություն կազմակերպելու և վարելու համար իրավական, տնտեսական և կազմակերպչական գիտելիքներ և հմտություններ:

**Դասընթացի խնդիրները.**

1. Փոխանցել համակարգված գիտելիք գործարարության կազմակերպման վերաբերյալ:
2. Մշակել կազմակերպա-կառավարչական հմտություններ գործարարությամբ զբաղվելու համար:
3. Հաղորդել գիտելիքներ գործունեության սուբյեկտների պատասխանատվության վերաբերյալ:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Բնութագրելու գործարարության միջավայրը և տեսակները:
2. Տարբերելու ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը:
3. Իմանալու ձեռնարկության պետական գրանցման փաստաթղթերի փաթեթը:
4. Թվարկելու գործունեության տեխնիկա-տնտեսական հիմնավորման պահանջները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Մշակելու բիզնես-գաղափարներ և վերլուծության միջոցով, ընտրել լավագույնը
2. Կազմակերպելու սեփական գործ և որոշել դրա արդյունավետությունը:
3. Գնահատելու ռիսկը և կողմնորոշվելու ստեղծված ցանկացած իրավիճակում:
4. Հայթայթելու, վերլուծելու և տեղին օգտագործելու գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

**գ.** ***ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)***

1. Աշխատելու թիմում:
2. Մոտիվացնելու:
3. Առաջնորդելու:
4. Աշխատելու տեղեկատվության հետ:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ3.**կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

**Գ4.**օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. գործնական խաղ /թիմային աշխատանք/
2. դասախոսություն, սեմինար
3. ինքնուրույն աշխատանք /զեկույց,ռեֆերատ,/
4. ճանաչողական էքսկուրսիաներ

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար նախատեսված ստուգարքը անց կացվում գրավոր:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1**. Գործարարության էությունը և ֆունկցիաները: **Թեմա 2.** Գործարարության միջավայրը և

| |
|---|
| տեսակները: **Թեմա 3**. Գործարարության սուբյեկտները: **Թեմա 4**. Ձեռնարկության կազմակերպա-իրավական ձևերը: **Թեմա 5.** Բիզնես-գաղափարը և բիզնես հայեցակարգը,որպես գործարարության նախադրյալ: **Թեմա 6.** Մարքեթինգի պլան: **Թեմա 7**. Գործունեության կադրային ապահովումը: **Թեմա 8**. Գործունեության մեկնարկային կապիտալը և ընթացիկ գործունեության ֆինանսական ապահովումը: **Թեմա 9.** Արտադրական պլան **Թեմա 10.** Ինքնարժեքի կալկուլյացիա: **Թեմա 11.** Ձեռնարկատիրական ռիսկ: **Թեմա 12**. Ֆինանսական պլանավորում: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. М.Н. Кондратьева, Е. В. Баландина, Ю. С. Трефилова «Бизнес-планирование» учебное пособие, Ульяновск УлГТУ 2014/ http://venec.ulstu.ru/lib/disk/2015/17.pdf/<br>2. В.Ю. Буров, «Основы предпринимательства»,учебное пособие, Чита – 2011.<br>3. В.А. Богомолова, Н. М. Белоусова, О.В. Кублашвили, Р.Ю. Ролдугина, «Бизнес-планирование», учебное пособие, Москва 2014 http://storage.elib.mgup.ru/6/bogomolova_2014.pdf//<br>4. С.И. Башаримова, М.В. Дасько, «Основы предпринимательства» учебное пособие.<br>5. Е.К. Торосян, Л. П. Сажнева, Ж. Н. Зарубина, «Основы предпринимательской деятельности», учебное пособие, Санкт-Петербург 2016 https://books.ifmo.ru/file/pdf/1909.pdf//. |

| | | |
|---|---|---|
| **1. 0304/B17** | **2. Կրոնագիտության հիմունքներ** | **3. 2 ECTS կրեդիտ** |
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6. 4-րդ կիսամյակ** | **7. Ստուգարք** | |

| |
|---|
| 8. ***Դասընթացի նպատակն է՝*** ուսանողի մոտ ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների, դրանց դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունների, Հայ Առաքելական եկեղեցու պատմության հիմնահարցերի, արդի կրոնական ներփակ հոսանքների ու դենոմինացիաների վերաբերյալ:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. Ձևավորել ընդհանուր գիտելիքներ ու պատկերացումներ ժամանակակից կրոնների, կրոնական տարատեսակ ուղղությունների վերաբերյալ:<br>2. Ուսումնասիրել կրոնական տարատեսակ ուղղությունների դավանաբանական ու պաշտամունքային առանձնահատկությունները: |
| 9. **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու ինչ է կրոնը, ինչպիսի կրոններ կան աշխարհում, ինչ դավանաբանական, պաշտամունքային, տոնածիսական առանձնահատկություններ ունեն դրանք:<br>2. Նկարագրելու Հայ Առաքելական եկեղեցու պատմությունը, դավանաբանական առանձնահատկությունները:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Մեկնաբանելու ժամանակակից կրոնների և կրոնական հոսանքների ու ուղղությունների զարգացման տրամաբանությունը, առանձնահատկություններն ու միտումները:<br>2. Համեմատական վերլուծության ենթարկելու և իրարից տարբերելու հին աշխարհի տարբեր ժողովուրդների դիցաբանական համակարգերը:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: |
| 10. **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Բ4.**ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով: |
| 11. **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն |

2. քննարկումներ
3. բանավեճ
4. զեկուցում
5. ռեֆերատ
6. անհատական և խմբային առաջադրանքներ

12. **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**
*Ստուգարքը.* Ստուգարքը անց է կացվում բանավոր, նախապես տրամադրված հարցաշարի շրջանակներում:

13. **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**
**Թեմա 1.** Դասընթացի առարկան, կրոնի պատմական ձևերը: **Թեմա 2.** Ժամանակակից կրոնները: Ազգային և համաշխարհային կրոններ: **Թեմա 3.** Բուդդայականություն, իսլամ, դավանանքը, պաշտամունքը, հիմնական ուղղությունները: **Թեմա 4**. Քրիստոնեություն: Դավանաբանությունը և պաշտամունքը: Աստվածաշունչ: **Թեմա 5**. Արդի կրոնական միավորումներն ու համայնքները: **Թեմա 6**. Քրիստոնեությունը Հայաստանում I-IV դարերում: **Թեմա 7**. Հայ Առաքելական եկեղեցին V-IX դարերում: **Թեմա 8**. Հայ Առաքելական եկեղեցին X-XIV դարերում: **Թեմա 9**. Հայ Առաքելական եկեղեցին XV-XVIII դարերում: **Թեմա 10**. Հայ Առաքելական եկեղեցին XIX-XX դարերում:

14. **Հիմնական գրականության ցանկ.**
1. Ալիշան Ղ., Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002:
2. Աստվածաշունչ:
3. Գուրան, Սոֆիա, 1929:
4. Երուանդ վրդ. Տէր- Մինասեանց, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա., Էջմիածին, 1908.
5. Владимиров Н., Овсиенко Ф., Мировые религии, М., 1998.
6. История религии, т. 1-2, М., 2002.

| **0202/B17** | **Մշակութաբանության հիմունքներ** | **2 կրեդիտ** |
|---|---|---|
| **2 ժամ/շաբ.** | **30/0/0** | |
| **4-րդ կիսամյակ** | **ստուգարք** | |

**Դասընթացի նպատակն է՝** ուսանողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել մշակութաբանության առարկայի և «մշակույթ» հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների և մեխանիզմների մասին: Հատուկ ուշադրություն դարձնել համաշխարհային ու հայ մշակույթների ընդհանուր բնութագրերի և ներկա գործընթացների վրա:

**Դասընթացի խնդիրները.**
1. Ձևավորել համակարգված պատկերացում մշակույթի բաղադրիչների, երևույթների, գործընթացների վերաբերյալ:
2. Ուսումնասիրել հայ և համաշխարհային մշակույթների ընդհանուր բնութագրերը:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**
***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***
1. Ներկայացնելու գիտության մեջ մշակույթ» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***
1. Մեկնաբանելու մշակույթ, ենթամշակույթ, հակամշակույթ հասկացությունները:
2. Վերլուծելու մշակութային գործընթացները և մշակույթի զարգացման դինամիկան:
3. Մեկնաբանելու ժամանակակից մշակութային գործընթացների առանձնահատկությունները:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***
1. Աշխատելու թիմում:

2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. ռեֆերատներ
5. զեկուցումներ

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Ստուգարք.*** Ստուգարքն անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1.** Դասընթացի ուսումնասիրման օբյեկտը, առարկան և խնդիրները: «Մշակույթ» հասկացության սահմանումներն ու մշակույթի էության, ծագման և զարգացման վերաբերյալ տեսությունները: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Ազգային և համամարդկային բնույթը: Զանգվածային և էլիտար մշակույթ: **Թեմա 3.** Հոգևոր գործունեության մշակութային ձևերը: Կրոն, գիտություն և արվեստ: **Թեմա 4.** Մշակույթ-բնություն-հասարակություն: **Թեմա 5.**Նախնադարյան մշակույթ: Հին Արևելյան քաղաքակրթություններ (միջագետքյան, եգիպտական, հին հնդկական և չինական): **Թեմա 6.** Անտիկ (հունահռոմեական) մշակույթ: **Թեմա 7.** Միջնադար՝ քրիստոնեական և իսլամական մշակույթներ: **Թեմա 8.** Վերածնունդ և Ռեֆորմացիա: **Թեմա 9.** Նոր դարաշրջանի եվրոպական մշակույթը: **Թեմա 10.** Մոդեռնիզմի և պոստմոդեռնիզմի դարաշրջանների մշակույթը: **Թեմա 11.**Հայկական մշակույթ:

**Հիմնական գրականության ցանկ.**


1. Մելքումյան Գ., Մշակութաբանություն, Երևան, 2000:
2. Սարգսյան Ս. Ա., Մշակութաբանություն, Երևան, 1997
3. Սարգսյան Ս. Ա, Մշակույթի տեսություն և հայ մշակույթի պատմություն, Երևան, 2004:
4. Арутюнов С. А., Рыжакова С. И., Культурная антропология, М., 2004.
5. Розин В. М., Культурология, М., 1998.


| | | |
|---|---|---|
| **1.0201/B17** | **2.Սոցիոլոգիայի հիմունքներ** | **3.2 ECTS կրեդիտ** |
| **4.2 ժամ/շաբ.** | **5.30/0/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Ստուգարք** | |

**8.Դասընթացի նպատակն է՝** ծանոթացնել ուսանողներին անհատների, սոցիալական խմբերի, դասակարգերի, մարդկային այլ խմբերի գործունեության մեջ հասարակական ընդհանուր օրինաչափությունների դրսևորման ձևերին և գործողության մեխանիզմներին տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

**Դասընթացի խնդիրները.**

1. Ձևավորել համակարգված պատկերացում կիրառական սոցիոլոգիայի ընդհանուր կառուցվածքի վերաբերյալ:
2. Ուսումնասիրել սոցիալական խմբերի ընդհանուր օրինաչափությունները, դրսևորման ձևերը և գործողության մեխանիզմները տարբեր պատմական պայմաններում և իրադրություններում:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումները և տեսությունները:
2. Սահմանելու սոցիոլոգիայի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությունը, մշակույթի

| |
|---|
| ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Մեկնաբանելու տեղեկատվություն հավաքելու մեթոդները:<br>2. Վերլուծելու սոցիալական խմբերը, դասակարգերը:<br>3. Մեկնաբանելու կիրառական սոցիոլոգիայի հետազոտության մեթոդների տեսակները:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Աշխատելու թիմում:<br>2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: |
| 10. **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքը.**<br>**Բ2.**պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով: |
| **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն<br>2. քննարկումներ<br>3. բանավեճեր<br>4. ռեֆերատներ<br>5. 5. զեկուցումներ: |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***Ստուգարքն*** անցկացվում է բանավոր: Տրվում է առավելագույնը 4 հարց՝ նախապես տրամադրված հարցաշարից: |
| **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**<br>**Թեմա 1**. Կիրառական սոցիոլոգիա առարկայի նպատակը, խնդիրները: **Թեմա 2**. Տեղեկատվություն հավաքելու մեթոդները: **Թեմա 3.** Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ: **Թեմա 4**. Հարցաշարի կառուցվածքը, տեսակները: **Թեմա 5**. Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Бабосов Е.М. Прикладная социология. Тетра Системс, 2001. ISBN 985-6577-74-8<br>2. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Москва: Альфа-М; Инфра-М, 2011.<br>3. Горшков М.К., Шереги Ф.Э. Прикладная социология. Методология и методы. Интерактивное уч. пособ. На CD-ROM. 2012 г.<br>4. Долгоруков А.М. От замысла к действию. Стратегическое управление. ДИСКУРС, 2011.<br>5. Ельмеев В.Я., Овсянников В.Г. Прикладная социология: Очерки методологии. СПб.: СПбГУ, 1994 г. (1-е изд.)<br>6. Кравченко А.И. Прикладная социология и менеджмент: Хрестоматия. М.: МГУ, 1998. |

| | | |
|---|---|---|
| **1. 0201/B17** | **2.Տնտեսագիտության հիմունքներ** | **3.2 ECTS կրեդիտ** |
| **4.2 ժամ/շաբ.** | **5.30/0/0** | |
| **6.4-րդ կիսամյակ** | **7.Ստուգարք** | |
| **8.Դասընթացի նպատակն է**՝ուսանողների մոտ ձևավորել համակարգված տրամաբանական մտածողություն և տալ տնտեսագիտական ընդհանուր գիտելիքներ:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. Ուսանողներին մեկնաբանել տնտեսագիտության հիմնարար օրենքները կատեգորիաները, ցուցանիշները:<br>2. Ուսանողներին բացատրել շուկայական տնտեսության սկզբունքները:<br>3. Ուսուցանել ուսանողներին օգտվել մասնագիտական գրականությունից, օրենքներից: | | |

| |
|---|
| 4. Ուսանողներին զինել միկրո և մակրո ցուցանիշները հասկանալու, վերլուծելու կարողություններով: |
| **9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Սահմանելու և մեկնաբանելու շուկայական տնտեսության առանձնահատկությունները, սկզբունքները, տնտեսական օրենքները:<br>2. Ներկայացնելու շուկայի մոդելները, ռեսուրսների շուկաները և դրանց առանձնահատկությունները:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Ներկայացնելու միկրո, մակրո ցուցանիշները, ֆինանսաբանկային համակարգը:<br>2. Վերլուծելու տնտեսական իրավիճակները:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Աշխատելու թիմում:<br>2. Տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը, հմտորեն հաղորդակցվել հանրության հետ: |
| **10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Բ4.**ընտրելու, վերլուծելու և աղապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով: |
| **11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. Դասախոսություններ<br>2. Սեմինարներ, քնարկումներ և բանավեճեր<br>3. Խմբային աշխատանքներ<br>4. Ռեֆերատներ |
| **12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Վերջնարդյունքների ձևավորումը ստուգելու համար ***ստուգարքն*** անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասընթացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված: |
| **13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**<br>**Թեմա 1**. Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: **Թեմա 2**. Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: **Թեմա 3.** Տնտեսության շուկայական համակարգը և եկամտի շրջապտույտը: **Թեմա 4**. Անհատական շուկաների վերլուծությունը, պահանջարկ և առաջարկ: **Թեմա 5**. Սպառողի վարքի տեսություն: **Թեմա 6.** Արտադրության ծախքերի տնտեսություն: **Թեմա 7**. Շուկայի կառուցվածքը և գնի ու արտադրության ծավալի որոշումը: **Թեմա 8**. Ձեռնարկությունների ու կազմակերպությունների տիպերը և տեսակները: **Թեմա 9.** Ռեսուրսների գների ձևավորումը: **Թեմա 10**. Մակրոտնտեսական ցուցանիշներ: Ազգային հաշիվների համակարգը: **Թեմա 11**. Մակրոտնտեսական կայունություն և տատանումներ: **Թեմա 12**. Փողը և բանկային համակարգը, դրամավարկային քաղաքականություն: **Թեմա 13.** Պետական բյուջեն և ֆիսկալ քաղաքականությունը: **Թեմա 14**. Միջազգային առևտրի տեսություն: **Թեմա 15**. Վճարային հաշվեկշիռ և արժույթային կուրսեր: |
| **14.Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Գործնի Ջ. , Տնտեսագիտություն: ԵՊՏՀ հրատ., Երևան, 1999:<br>2. Սամուելսոն Ս., Նորթհաուս Ու., Տնտեսագիտություն, Երևան, 1997:<br>3. Макконнелл К.Р., Брью С.Л. Економика. 17-ое изд., Москва, 2009.<br>4. Економическая теория. Учебник под ред. В. Камаева, Москва, 1998 |

| **1. 0304/B17** | **2.Քաղաքագիտության հիմունքներ** | **3.2 կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |

| **6.4-րդ կիսամյակ** | **7.ստուգարք** |
|---|---|

**8.Դասընթացի նպատակն է՝** ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, ձևավորել ուսանողների մոտ քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

**Դասընթացի խնդիրները.**

1. Ներկայացնել քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները:
2. Ներկայացնել քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
3. Ներկայացնել ու մեկնաբանել քաղաքական տեխնոլոգիա և քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:

**9.Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը և զարգացման էտապները:
2. Ներկայացնելու իշխանության կառուցվածքը, ռեսուրսները և տեսակները:
3. Թվարկելու ու մեկնաբանելու պետական կառավարման ձևերը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Վերլուծելու քաղաքական վարչակարգ հասկացությունը, տեսակները:
2. Մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսություն հասկացությունը:
3. Մեկնաբանելու քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերը:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Աշխատելու թիմում:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ3.**կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

**Բ4.**ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկումներ
3. բանավեճեր
4. զեկուցումներ:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

**Ստուգարք.** Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով: Ուսանողին տրվում է 4 հարց դասըն-թացի բովանդակությունից, որոնց բավարար պատասխանի դեպքում ստուգարքը համարվում է հանձնված:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական թեմաներից.**

**Թեմա 1**. Քաղաքագիտության ձևավորման նախապատմությունը: **Թեմա 2.** Քաղաքական մտքի զարգացման հիմնական էտապները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն և իշխանական հարաբերություններ: **Թեմա 4.** Քաղաքական ընտրանի /էլիտա/: **Թեմա 5.** Քաղաքական լիդերություն: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ: **Թեմա 7.** *Հասարակության քաղաքական համակարգը:* Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: Պետության ծագումը, բնույթը, դերը և հիմնական ֆունկցիաները: **Թեմա 8.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 9.** Քաղաքացիական հասարակություն: **Թեմա 10.** Քաղաքական սոցիալականացում և քաղաքական մասնակցություն: **Թեմա 11.** Ընտրություններ և ընտրական

համակարգեր: ***Թեմա* 12.** Գաղափարախոսությունների տեսություն: ***Թեմա* 13.** Ազգեր և ազգային քաղաքականություն: ***Թեմա* 14.** Քաղաքականությունը և կրոնը: ***Թեմա 15.*** Քաղաքական մշակույթ:

**14.Հիմնական գրականության ցանկ.**


1. Քաղաքագիտություն: ԵՊՀ հրատ., Երևան, 2006:
2. Буренко В.И., Журавлев В.В., Политология. Изд-во Моск. гуманит. ун-та, Москва, 2004.
3. Гаджиев К.С. Политология. Москва, 2005.
4. Политология. Под ред. А.А. Радугина. Изд-во Центр, Москва, 1999.
5. Пушкарева Г.В. Политология. Изд-во Айрис-пресс, Москва, 2002.
6. Мальцев В.А. Основы политологии. Изд-во ИТРССПП, Москва, 1998.


## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ (ՊԱՐՏԱԴԻՐ)

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B18** | **2. Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում - 1** | **3. 6 ECTS կրեդիտ** |
| **4. 6 ժամ/շաբ.** | **5. 0/90/0** | |
| **6. 1-ին կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն** է ուսանողների մոտ ձևավորել ստույգ գիտելիքներ ռուսաց լեզվի ուղղագրությունից և կետադրությունից, կատարելագործել նրանց ընդհանուր գրագիտության մակարդակը և բարձրացնել խոսակցական ռուսաց լեզվի իմտության մակարդակը:

**Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. ներկայացնելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության կանոնները,
2. բացատրելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության հիմնական սկզբունքները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. կիրառելու ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսքի մեջ,
2. ցույց տալու առաջացած խնդիրների լուծման եղանակները,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),
2. կիրառելու ունեցած գիտելիքները, ընկալելու նոր գիտելիքները և տարածելու դրանք:

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական
դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Բ7.**կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. գործնական պարապմունքներ,
2. գրավոր աշխատանքներ՝ թելադրություններ, շարադրություններ, փոխադրություններ,
3. բանավոր խոսքի զարգացմանն ուղղված վարժություններ, քննարկումներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում.*** Գրավոր աշխատանք, 10 միավոր առավելագույն արժեքով:

***2-րդ ընթացիկ ստուգում.*** Գրավոր աշխատանք, 10 միավոր առավելագույն արժեքով:

| |
|---|
| Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.<br>***Թեմա 1.*** Ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության հիմնական սկզբունքները: ***Թեմա 2.*** Ռուսաց լեզվի ձայնավոր և բաղաձայն հնչյունները: ***Թեմա 3.*** Ռուսաց լեզվի ձայնավորների ուղղագրությունը արմատներում: ***Թեմա 4.*** Ռուսաց լեզվի բաղաձայնների ուղղագրությունը արմատներում: ***Թեմա 5.*** Ь եւ Ъ նշանները: ***Թեմա 6.*** Ռուսերենի նախածանցների ուղղագրությունը: ***Թեմա 7.*** Կետադրական նշանները ռուսերենի պարզ նախադասությունում: ***Թեմա 8.*** Ռուսերենի բառերի բուն և փոխաբերական իմաստները: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Акопян А.В., Газарова Д.Ю., Мкртычян-Лалаян С.А., Русская орфография в упражнениях. Учебное пособие. – Ер.: Изд-во ЕГУ, 2013.<br>2. Григорьева Н.А., Русский язык. Тесты и упражнения для подготовки к Единому государственному экзамену. – М.: Айрис-пресс, 2006.<br>3. Розенталь Д.Э., Голуб И.Б., Русская орфография и пунктуация. – М.: Русский язык, 1990.<br>4. Ткаченко Н.Г., 300 диктантов для поступающих в вузы. – М.: Рольф, 2000.<br>5. Ткаченко Н.Г., Тесты по грамматике русского языка. В 2 ч. – М.: Рольф, 2001. |

| **1. 0305/B19** | **2. Լեզվաբանության ներածություն** | **3. 3 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 30/15/0** | |
| **6. 1-ին կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է** նախնական գիտելիքներ հաղորդել լեզվաբանական հիմնական հասկացությունների մասին, ինչպիսիք են, օրինակ, լեզվական և խոսքային հայեցակերպերը, լեզվի նշանային բնույթը, լեզվի կառուցվածքային և համակարգային բնութագրերը, լեզվի գոյության ձևերը, լեզուների ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումները և այլն, ներկայացնել լեզվաբանության բաժինների և ուղղությունների, լեզվաբանական գիտակարգերի և միջգիտակարգերի բնութագրերը, լեզվաբանական հետազոտության հիմնական մեթոդները և դրանց դերը լեզվաբանության՝ որպես գիտության զարգացման գործում: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. ըմբռնելու լեզվի նշանակությունը՝ որպես մարդկության հաղորդակցման կարևորագույն միջոցի,<br>2. ճանաչելու լեզվի դերը՝ որպես մարդկության հոգևոր և նյութական մշակույթի պատմության գանձարանի,<br>3. ներկայացնելու լեզվի հասարակական գործառույթները,<br>4. ներկայացնելու ժամանակակից ռուսաց լեզվի տեսությունները, նրա պատմությունը՝ իր առավել կարևոր գրավոր հուշարձաններով, արդի փուլում զարգացման միտումները,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. կիրառելու լեզվական ճանաչողությունը ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ժամանակ,<br>2. գնահատելու արտաքին և ներքին գործոնների դերը լեզվական փոփոխությունների հարցում,<br>3. տարբերակելու լեզուների ծագումնաբանական և պատահական ընդհանրությունները,<br>4. օգտագործելու ձեռք բերված գիտելիքները դասավանդման գործընթացում,<br>5. կիրառելու լեզվաբանական վերլուծության հիմնական մեթոդները,<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>**1.** ստեղծագործաբար կիրառելու ստացած գիտելիքները: | | |

| |
|---|
| **Դասընթացը ձևավորում է** <u>**կրթական ծրագրի**</u> **հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,<br>**Ա2.**արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,<br>**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով, |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1.Դասախոսություն<br>2.Սեմինար<br>3.հարցադրումներ և քննարկումներ,<br>4. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր |
| **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***1-ին ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով,<br>***2-րդ ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Լեզուն որպես լեզվաբանության առարկա (լեզվի բնութագրերը, լեզվի բնորոշումը, լեզվի գոյության ձևերը): **Թեմա 2**. Լեզվաբանության բաժինները, գիտաճյուղերը և լեզվաբանական մեթոդները: **Թեմա 3**. Հնչյունաբանություն (հնչյունախոսություն, հնչույթաբանություն, պատմական հնչյունաբա-<br>նություն): **Թեմա 4**. Բառագիտություն (բառագիտության առարկան, իմաստաբանություն, իմաստափոխություն, տերմինագիտություն, բառարանագիտություն): **Թեմա 5**. Քերականություն (ձևաբանություն, շարահյուսություն): **Թեմա 6**. Լեզվի զարգացումը (լեզվի ներքին զարգացումը, լեզվական ազդեցությունների տեսակները): **Թեմա 7**. Լեզուների ծագումնաբանական և տիպաբանականդասակարգումները: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Աղայան Է.Բ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987<br>2. Вендина Т.И., Введение в языкознание, М., 2003<br>3. Камчатнов А.М., Николина Н.А., Введение в языкознание, М., 2010<br>4. Реформатский А.А., Введение в языковедение, М., 1996<br>5. Широков О.С., Языковедение: введение в науку о языках, М., 2003 |

| **1. 0305/B20** | **2. Ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանություն** | **3. 3 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 30/15/0** | |
| **6. 1-ին կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է** ծանոթացնել ուսանողներին ռուսաց լեզվի հնչյունային և հնչույթային համակարգերին, ներկայացնել ժամանակակից ռուսաց լեզվի հնչյունաբանության խնդիրները, կատարելագործել ռուսերենի արտասանությունը: | | |
| **8. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. տարբերակելու տառ, հնչյուն և հնչույթ հասկացողությունները,<br>2. տալ հնչյունների դասակարգումը և բնութագիրը,<br>3. բացատրելու հնչյունափոխության տեսակները,<br>4. տարբերակելու հատույթային և վերհատույթային միավորները,<br>5. բացատրելու վերհատույթային հնչյունական միջոցները, | | |

6. թվարկելու վերհատույթային հնչյունական միջոցների գործառույթները,

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. բացատրելու ուղղախոսության՝ ճիշտ արտաանության, կանոնները,
2. կիրառելու վերհատույթային հնչյունական միջոցները,

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. գրագետ շարադրելու մասնագիտական նյութը:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա5.**ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

**Բ6.**վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. ինտերակտիվ դասախոսություն,
2. ձայնագրությունների ունկնդրում և քննարկում:

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

***2-րդ ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Հնչյունաբանություն: Հնչյուն, հնչույթ, տառ: Հնչյունաբանության տեսակները: Հնչյունների դասակարգումը և բնութագիրը: Հնչյունային տառադարձություն: **Թեմա 2**. Ուղղախոսություն՝ ճիշտ արտասանություն: Ձայնավոր ու բաղաձայն հնչյունների ճիշտ արտասանության կանոնները: **Թեմա 3**. Վերհատույթային հնչյունաբանություն: Վերհատույթային հնչյունական միջոցները՝ շեշտ, հնչերանգ: Վերհատույթային միավորների տեսակները՝ վանկ, հնչաբառ, խոսքային տակտ, ֆրազ: **Թեմա 4**. Հնչերանգի տեսակները տարբեր բնույթի նախադասություններում:

**Հիմնական գրականության ցանկ.**

1. Касаткин Л.Л., Современный русский литературный язык. Фонетика. /Под ред. П.А.Леканта/. 5-е изд. М.: Изд-во Юрайт, 2017.
2. Панов М.В., Современный русский язык. Фонетика. М.: Высшая школа, 1979. *Լրացուցիչ գրականության ցանկ.*
3. Аванесов Р.И., Фонетика современного русского литературного языка. М., 1956.
4. Брызгунова Е.А., Звуки и интонации русской речи. 5-е изд., М.: Русский язык, 1983.
5. Виноградов В.А., Консонантизм и вокализм русского языка. Практическая фонология. М.: МГУ, 1970.
6. Касаткин Л.Л., Современный русский язык. Фонетика. М.: Academia, 2006.

| | | |
|---|---|---|
| **1. 0303/B21** | **2. Առաջին բուժօգնություն և երեխայի առողջության պահպանման հիմունքներ** | **3. 3 ECTS կրեդիտ** |
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 15/15/0** | |
| **6. 1-ին կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին տալ գիտելիքներ հիվանդներին և տուժածներին գրագետ և ճիշտ օգնություն կազմակերպելու վերաբերյալ, ինչպես նաև զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններ աղետների օջախում տուժածներին առաջին օգնություն ցույց տալու, վիճակը վերահսկելու և տեղափոխելու համար, ուսանողների մոտ զարգացնել բժշկա-հիգիենիկ դաստիարակություն, պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակների պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և

| |
|---|
| վիրավորների նկատմամբ:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. զարգացնել անհրաժեշտ հմտություններ և կարողություններնաղետների տուժածներին առաջին օգնություն ցույց տալու,նվիճակը վերահսկելու համար և տեղափոխելու համար,<br>2. պատրաստել նրանց պրակտիկ աշխատանքի արտակարգ իրավիճակներին պայմաններում, ճիշտ կազմակերպել խնամք և տեղափոխում հիվանդների և վիրավորների նկատմամբ: |
| ***Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝***<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու բժշկա-հիգիենիկ դաստիրակության կանոնները:<br>2. Թվարկելու երեխայի առողջության պահպանման մեխանիզմները, բնութագրելու դրանց առանձնահատկությունները:<br>3. Թվարկելու տարբեր վտանգավոր իրավիճակներում տուժածի քննության և առաջին բուժօգնության ձևերը:<br>4. Թվարկելու երեխաների տարբեր տարիքային խմբերի համար ռիսակյին հանդիսացող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունները և ներկայացնելու դրանց դեմ պայքարելու ձևերը:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Ցուցադրելու և կիրառելու հիգիենայի պահպանման կանոնները պրակտիկ աշխատանքում:<br>2. Ցուցադրել առաջին բուժօգնության հնարները (վիրակապում, բեկակալի տեղադրում, ջերմաչափում, պուլսի որոշում) գործնական ստեղծած իրավիճակներում:<br>3. Համապատասխան վայրերում իրականացնելու տուժածների առաջին բուժօգնություն (ստամոքսի լվացում, հոգնա, այրվածքի մակերեսի և խորության որոշում և այլն):<br>4. Կազմակերպելու և ցուցաբերելու առաջին օգնություն ցրտահարված տուժածներին:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Անհրաժեշտության դեպքում կիրառելու առաջին բուժօգնության հնարները հասարակական վայրերում: |
| **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Բ3.**կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները<br>**Բ5**.կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը: |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. Դասախոսություն<br>2. Սեմինար<br>3. հարցադրումներ և քննարկումներ,<br>4. լաբորատոր աշխատանքներ,<br>5. տնային, ինքնուրույն և ստուգողական աշխատանքներ և խմբային նախագծեր: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: ***1-ին ստուգում.*** Գրավոր /ստուգողական աշխատանք/:<br>***2-րդ ստուգում.*** Բանավոր հարցում: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Հասկացություն հիվանդության մասին: Տուժածի քննության մեթոդները: **Թեմա 2.** Վերակենդանացման միջոցառումներ: **Թեմա 3.** Թունավորումներ: **Թեմա 4.** Վնասվածքներ: **Թեմա 5.** Ջերմային խանգարումներ: **Թեմա 6.** Արյունահոսություններ: **Թեմա 7.** Վիրակապություններ: Վիրակապություններ: **Թեմա 8.** Առողջ ապրելակերպի կանոնները: **Թեմա 9.** Ինֆեկցիոն հիվանդություններ: **Թեմա 10.** Սեռավարակներ: Անվտանգ սեռական կապեր: Պրոֆեսիոնալ հիվանդություններ: |

| |
|---|
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Рожинский М.М, Катовский Г.Б., Оказание доврачебной помощи, Медицина, Москва, 1981. |

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B23** | **2. Գրականագիտության ներածություն** | **3. 3 ECTS կրեդիտ** |
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6. 1-ին կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ներկայացնել գրականագիտական հիմնական հասկացությունները, գրականության կապը արվեստի մյուս տեսակների հետ, գրականության զարգացման օրինաչափությունները, լեզվաարտահայտչական միջոցները, տաղաչափական հիմնական հասկացությունները, գրական գործընթացի տարրերը (գրական ժանրեր, սեռեր, ուղղություններ):

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. նկարագրելու գրականագիտության բաժինների փոխադարձ կապը, գրականության և արվեստի մյուս տեսակների առնչությունները,
2. բացատրելու գրական ժանրերի տարբերակման սկզբունքները,
3. նկարագրելու գրականության լեզվաարտահայտչական միջոցները, տաղաչափական համակարգերի առանձնահատկությունները,
4. բացատրելու գրականագիտական հիմնական հասկացությունները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. տարբերակելու գրական ստեղծագործությունների կառուցվածքային և ժանրային առանձնահատ-կությունները,
2. վերլուծելու գրական երկերը լեզվական, տաղաչափական սկզբունքների տեսանկյունից,
3. գործնականում իրականացնելու գրականագիտական ուսումնասիրություններ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. հավաքելու և համակարգելու գրականագիտական հասկացությունների վերաբերյալ տվյալները,
2. մեկնաբանելու գրական երկի տարբեր մակարդակների (կառուցվածքային, լեզվական, տաղաչափական, սյուժետային) վերլուծության սկզբունքները:

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական
դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա2.**արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն,
2. սեմինար պարապմունքներ և քննարկումներ.
3. գրական երկերի լեզվական, տաղաչափական և ժանրային վերլուծություններ:

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

***2-րդ ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

| |
|---|
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.** **Թեմա 1**. Գրականագիտությունը և նրա բաժինները: **Թեմա 2**. Գրականությունն արվեստների համակարգում: **Թեմա 3**. Գեղարվեստական պատկեր, նրա տեսակները: **Թեմա 4**. Գրական երկի բովանդակության և ձևի միասնությունը: **Թեմա 5**. Գեղարվեստական լեզվի առանձնահատկությունները: Թեմա 5. Գրական երկի թեման և թեմատիկան: **Թեմա 6**. Գրական երկի կոմպոզիցիան, սյուժեն և ֆաբուլան: **Թեմա 7**. Չափածո երկի կառուցվածքը. տաղաչափական համակարգեր: **Թեմա 8**. Գրական սեռեր և ժանրեր: **Թեմա 9**. Գրական մեթոդներ, ուղղություններ, հոսանքներ: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Էդ.Ջրբաշյան, Գրականագիտության ներածություն, Երևան, 2011:<br>2. Ջ.Ավետիսյան, Գրականության տեսություն, Երևան, 1998:<br>3. Ռ.Ուելլեք, Օ.Ուորրեն, Գրականության տեսություն, Երևան, 2008:<br>4. Գրականության տեսության արդի խնդիրներ, Երևան, 2016:<br>5. В.Е.Хализев, Теория литературы, Москва, 2005. |

| | | |
|---|---|---|
| **1. 0303/B22** | **2. Մանկավարժության գործունեության հիմունքներ** | **3. 2 ECTS կրեդիտ** |
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 22/0/8** | |
| **6. 1-ին կիսամյակ** | **7. Առանց ընթացիկ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է** նպաստել ապագա մանկավարժի ինչպես ընդհանուր, այնպես էլ մանկավարժական աշխարհայացքի ձևավորմանը, ապահովել մանկավարժի անհրաժեշտ տեսական և գործնական պատրաստվածության մակարդակը: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. ներկայացնելու մանկավարժական գործունեության հիմնական բնութագրերը,<br>2. սահմանելու մանկավարժի առաքելությունը,<br>3. թվարկելու և բացատրելու ուսուցչի մասնագիտական որակները,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. կիրառելու մանկավարժական նոր տեխնոլոգիաները,<br>2. ընտրելու առաջացած մանկավարժական կոնֆլիկտների լուծման եղանակները,<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),<br>2. վերլուծելու մանկավարժական առկա խնդիրները և գնահատելու դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները: | | |
| **Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Բ2.**պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,<br>**Բ5.**կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:<br>**Գ1.**պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում, | | |

| |
|---|
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն,<br>2. գործնական պարապմունք,<br>3. ռեֆերատների ներկայացում և քննարկում: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***Եզրափակիչ բանավոր քննություն*** 20 միավոր առավելագույն արժեքով: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1.** Ուսուցչի մասնագիտության ներածություն **Թեմա 2**. Մանկավարժական գործունեության ծագումն ու զարգացումը: **Թեմա 3.** Մանկավարժական գործունեության տեսակները: **Թեմա 4.** Մասնագիտական գործունեության բնութագրերը: **Թեմա 5.** Մանկավարժական հիմնական գործունեությունը մարդու կենսագործունեության համակարգում: **Թեմա 6.** Ուսուցչի մասնագիտական գործիմացություն, զարգացման էությունը, համակարգը, բովանդակությունը: **Թեմա 7.** Մանկավարժական մասնագիտությունների զարգացման հեռանկարները նոր հասարակական, տնտեսական տեղեկատվական պայմաններում: **Թեմա 8.** Մանկավարժական գաղափարների, մանկավարժական հաղորդակցման էությունը: **Թեմա 9.** Ուսուցչի մասնագիտական որակները, դրանց զարգացման և կատարելագործման ուղիները: **Թեմա 10.** Ընդհանուր և մանկավարժական մշակույթ: **Թեմա 11.** Մանկավարժական մշակույթի հիմնական տարրերը: **Թեմա 12.** Վարպետությունն ու տեխնիկան ուսուցչի մասնագիտության մեջ: **Թեմա 13.** Կրթությունը որպես հասարակության տնտեսական, սոցմշակութային, հոգևոր զարգացման արտացոլում: **Թեմա 14.** Մանկավարժական կրթօջախներ: **Թեմա 15.** Մանկավարժական կրթության իրականացման եղանակները: **Թեմա 16.** Ուսուցչի մասնագիտական կայացում: **Թեմա 17.** Մասնագիտական կայացման հակասություններն ու ճգնաժամերը: **Թեմա 18.** Մանկավարժի ինքնակրթության աղբյուրները: **Թեմա 19.** Հասկացություն անձնային մասնագիտական հեռանկարի մասին: **Թեմա 20.** Մանկավարժի մասնագիտական աճը: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի որակավորման տարակարգի բնութագրիչները, դրանց շնորհման չափանիշները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (2013):<br>2. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., «Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում», Երևան, Ասողիկ, 2004.- 226էջ:<br>3. Բուդաղյան Ա.Ս., Կարաբեկյան Ս.Բ., «Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրերի կառուցում և իրականացում: Մեթոդական ուղեցույց» - Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն. - Եր., «Թասկ» ՍՊԸ, 2010, 110 էջ:<br>4. Բուդաղյան Ա.Ս., Մանասյան Ն.Վ., Սանթուրջյան Մ.Գ., Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների առկա վիճակը և հեռանկարները Բոլոնիայի գործընթացի համատեքստում: Զեկույց/ Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոն, – Երևան , Փրինթինֆո, 2012, –222 էջ:<br>5. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը: Երևան, 2011, 148 էջ: |

| **1. 0305/B27** | **2. Ռուս գրականության պատմություն /ռուս բանահյուսություն, 18-րդ դարի ռուս գրականություն/** | **3. 5 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 5 ժամ/շաբ.** | **5. 60/0/15** | |
| **6. 2-րդ կիսամյակ** | **7. Եզրափակիչ գնահատումով** | |
| **Դասընթացի նպատակն է** նկարագրել ռուս բանահյուսության հիմնական ժանրերն ու դրանց յուրահատկությունները, ներկայացնել հին ռուս գրականության պատմական զարգացումը և գրական երկերի գեղարվեստական առանձնահատկությունները, լուսաբանել 18-րդ դարի ռուս գրականության հիմնական միտումները, գրական ուղղությունները և ակնառու ստեղծագործությունները: | | |

| |
|---|
| **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. նկարագրելու ռուս բանահյուսության ժանրային համակարգը, ներկայացնելու և մեկնաբանելու հին ռուս գրականության և 18-րդ դարի ռուս գրականության կարևոր ստեղծագործությունները,<br>2. բացատրելու գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, բնութագրելու գրական երկերի պատմական-հասարակական դերը,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. վերլուծելու տարբեր ժանրերի, ոճերի միջնադարյան տեքստեր,<br>2. բնութագրելու XVIII- րդ դարի հիմնական գրական ուղղությունները,<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր: |
| **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական<br>դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,<br>**Ա2.**արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,<br>**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,<br>**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտա-կարգային կապերն ու հարաբերությունները, |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն,<br>2. գործնական պարապմունք,<br>3. ռեֆերատների ներկայացում և քննարկում: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***1-ին ընթացիկ քննություն***. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,<br>***2-րդ ընթացիկ քննություն***. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,<br>***Եզրափակիչ բանավոր քննություն***. 10 միավոր առավելագույն արժեքով: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Ռուս բանահյուսության ժանրային համակարգը: Ծիսական և օրացուցային բանահյուսություն: **Թեմա 2**. Էպիկական ժանրերն ու նրանց գեղարվեստական առանձնահատկությունները: **Թեմա 3**. Կիևյան Ռուսիայի գրականության ժանրային առանձնահատկությունները: **Թեմա 4**. Ռուս գրականության առանձնահատկությունները մոնղոլ-թաթարական արշավանքների շրջանում: **Թեմա 5**. 17-րդ դարի ռուս գրականությունը: Կլասիցիզմը ռուս գրականության մեջ (Տրեդիակովսկի, Լոմոնոսով, Սումարոկով): **Թեմա 6**. 18-րդ դարի դրամատուրգիան (Սումարոկով, Ֆոնվիզին): Դերժավինի պոեզիան: Կարամզինը՝ ռուս սենտիմենտալիզմի հիմնադիր: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Аникин В.П., Русское устное народное творчество. М., 2004<br>2. Зуева Т.В., Кирдан Б.П., Русский фольклор. М., 2002<br>3. Коровин В.И., Древнерусская литература, М., 2003<br>4. Лебедева О.Б., История русской литературы XVIII века. М., 2000 |

| **1. 0305/B25** | **2. Ժամանակակից ռուսաց լեզվի բառագիտություն** | **3. 4 ECTS կրեդիտ** |
|---|---|---|

| 4. 4 ժամ/շաբ. | 5. 45/15/0 |
|---|---|
| **6. 2-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** |

**8.Դասընթացի նպատակն** է ծանոթացնել ուսանողներին արդի ռուսերենի բառահամակարգին, բառապաշարի ձևավորման աղբյուրներին և ուղիներին, բառապաշարի իմաստային և ոճային առանձնահատկություններին:

**9.Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. նկարագրելու բառույթի լեզվական հատկանիշները,
2. բացատրելու բառույթի իմաստային նրբերանգները,
3. մատնանշելու բառույթի և դարձվածքի իմաստային և ոճական առանձնահատկությունները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. մեկնաբանելու և ճիշտ օգտագործելու ռուսերենի բառապաշարը,
2. խմբագրելու տեքստը ճիշտ բառօգտագործման տեսանկյունից,
3. մեկնաբանելու և ճիշտ օգտագործելու ռուսերենի դարձվածքները:

**10.Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական
դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Ա5.**ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

**11.Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն,
2. վերարտադրողական մեթոդ,
3. էվրիստիկ /մասնակի որոնողական/ մեթոդ,
4. հետազոտական մեթոդ,
5. նախագծերի կազմում:

**12.Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,
***2-րդ ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**13.Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Բառը որպես հիմնական լեզվամիավոր: Բառապաշարը որպես համակարգ: Բառիմաստը և նրա բաղադրիչները: Բառային և քերականական իմաստ: **Թեմա 2**. Ռուսերենի հիմնական բացատրական բառարանները: Բառարանի կազմության հիմնական սկզբունքները: **Թեմա 3**. Բազմիմաստ բառեր: Համանուն բառեր: Հարանուն բառեր: Հոմանիշներ: Հականիշներ: Հնացած բառեր: Նոր բառեր: Փոխառություններ: Բառբառային բառեր: Եզրույթներ: Ժարգոնային բառեր: **Թեմա 4**. Դարձվածքաբանության սկզբունքները: Դարձվածքը և բառը: Դարձվածքը և ազատ բառակապակցությունը: Դարձվածքների տեսակները:

**14. Հիմնական գրականության ցանկ.**

1. Солодуб Ю.П., Альбрехт Ф.Б., Современный русский язык. Лексика и фразеология современного русского языка (сопоставительный аспект). Учебник. М.: Флинта, Наука, 2002.
2. Суздальцева В.Н., Практикум по современному русскому языку. Лексика. Фразеология. М.: Аспект Пресс, 2004.
3. Сулименко Н.Е., Современный русский язык. Слово в курсе лексикологии. Учебное пос. М.: Флинта: Наука, 2006.
4. Фомина М.И., Современный русский язык. Лексикология. Учебник. Изд-е 4-е, испр. М.: Высшая школа, 2003.
5. Шанский Н.М., Лексикология современного русского языка. М.: Просвещение, 1972.
6. Шмелев Д.Н., Современный русский язык. Лексика. Изд-е 4-е, стереотипн. М.: URSS, КомКнига, 2006.

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B24** | **2. Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում – 2** | **3. 5 ECTS կրեդիտ** |
| **4. 5 ժամ/շաբ.** | **5. 0/75/0** | |
| **6. 2-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ամրապնդել և կատարելագործել առաջին կիսամյակում ստացած գիտելիքները ուղղագրությունից, կետադրությունից, բառապաշարից, գրագիտությունից ընդհանրապես, զարգացնել ռուսերենի հաղորդակցային հմտությունները:

**9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. ներկայացնելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության կանոնները,
2. բացատրելու ռուսերենի բառապաշարի, բառակազմության և ձևաբանության լայն հնարավորությունները խոսքի վերարտադրման ընթացքում,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. կիրառելու ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսքի մեջ,
2. նշելու առաջացած խնդիրների լուծման եղանակները,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),
2. ստեղծագործաբար կիրառելու ստացած գիտելիքները և տարածելու դրանք:

**10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական
դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Բ7.**կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. գործնական պարապմունքներ,
2. գրավոր աշխատանքներ՝ թելադրություններ, շարադրություններ, փոխադրություններ,
3. բանավոր խոսքի զարգացմանն ուղղված վարժություններ, քննարկումներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

***2-րդ ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

| |
|---|
| **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Ռուսաց լեզվի ինքնուրույն խոսքի մասերի՝ բայի, գոյականի, ածականի, թվականի, դերանունի ուղղագրությունը: **Թեմա 2**. Հոմանիշների, հականիշների, նույնանունների, հարանունների կիրառումը խոսքում: **Թեմա 3**. Ռուսերենի դարձվածաբանության գործնական ներուժը: **Թեմա 4**. Ռուսերենի բառակազմության հնարավորությունները խոսքում: **Թեմա 5**. Ռուսաց լեզվի ձևաբանության համակարգը. բայերի, գոյականների, ածականների, թվականների, դերանունների ձևավորման և կիրառման առանձնահատկությունները: **Թեմա 6**. Կետադրական նշանները ռուսերենի բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասություններում: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Акопян А.В., Газарова Д.Ю., Мкртычян-Лалаян С.А., Русская орфография в упражнениях. Учебное пособие. – Ер.: Изд-во ЕГУ, 2013.<br>2. Кудинова А.В., Правописание Н и НН в различных частях речи. – М.: Экзамен, 2010.<br>3. Ласкарева Е.Р., Чистая грамматика. – СПб.: Златоуст, 2012.<br>4. Розенталь Д.Э., Голуб И.Б., Русская орфография и пунктуация. – М.: Русский язык, 1990.<br>5. Ткаченко Н.Г., 300 диктантов для поступающих в вузы. – М.: Рольф, 2000.<br>6. Ткаченко Н.Г., Тесты по грамматике русского языка. В 2 ч. – М.: Рольф, 2001.<br>7. Хавронина С.А., Широченская А.И., Русский язык в упражнениях. (Russian in exercises). – М.: Русский язык. Курсы, 2012. |

| | | |
|---|---|---|
| **1. 0303/B26** | **2. Մանկավարժության տեսություն** | **3. 4 ECTS կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5. 45/0/15** | |
| **6. 2-րդ կիսամյակ** | **7. Եզրափակիչ գնահատումով** | |

| |
|---|
| **Դասընթացի նպատակն է** նպաստել ապագա մանկավարժի ինչպես ընդհանուր, այնպես էլ մանկավարժական աշխարհացքի ձևավորմանը, ապահովել մանկավարժին անհրաժեշտ տեսական և գործնական պատրաստվածության մակարդակը:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. ուսումնասիրել գործնական մանկավարժության հիմնական հասկացությունները,<br>2. բացահայտել ուսուցչի մասնագիտական գործունեության առանձնահատկությունները,<br>3. ուսումնասիրել մանկավարժական կրթության իրականացման եղանակները: |
| **8. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**<br>*ա. մասնագիտական գիտելիք և իմացություն*<br>1. Բնութագրելու մանկավարժության ուսումնասիրության առարկան, բացահայտելու մանկավարժության ծագումն ու զարգացման փուլերը, սահմանելու մանկավարժության հիմնական հասկացությունները:<br>2. Նկարագրելու մանկավարժության տեղը և դերը մարդաբանական գիտությունների համակարգում, բացահայտելու մանկավարժության կապը այլ գիտությունների հետ:<br>3. Մեկնաբանելու մանկավարժական գիտության մեթոդաբանությունը, մանկավարժական հետազոտությունների իրականացման գիտական մեթոդները, մանկավարժական գործընթացի բաղադրամասերը, փուլերը և օրինաչափությունները:<br>4. Ներկայացնելու ՀՀ կրթական համակարգի առանձնահատկությունները, կրթության նպատակը և բովանդակությունը կրթական բարեփոխումների արդի փուլում:<br>5. Թվարկելու և բացատրելու անձի զարգացման և սոցիալականացման վրա ազդող գործոնները:<br>6. Սահմանելու ուսուցման և դաստիարակության կազմակերպման սկզբունքները, թվարկելու դրանց իրականացման մեթոդները, ձևերը և տեխնոլոգիաները, ներկայացնելու ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից տեխնոլոգիաները, դաստիարակության համակարգի բաղադրամասերը:<br>*բ. գործնական մասնագիտական կարողություններ*<br>1. Կիրառելու տեսական գիտելիքները մանկավարժական տարբեր իրավիճակներում: |

2. Կատարելու գիտաուսումնական հետազոտություն, վերլուծելու, համակարգելու, ամփոփելու և իմաստավորելու հետազոտության արդյունքները:
3. Օգտվելու ուսումնական տեղեկատվության տարբեր աղբյուրներից, հավաքագրելու, համակարգելու և նպատակային կիրառելու մասնագիտական տեղեկատվությունը:
4. Մանկավարժական պրակտիկայի ընթացքում զուգակցելու ուսուցման և դաստիարակության ավանդական և նոր տեխնոլոգիաները, կիրառելու ուսումնադաստիարակչական արդյունքների ստուգման և գնահատման ժամանակակից ձևերը:
5. Ըստ ուսուցման և դաստիարակության նպատակների ձևակերպելու ուսումնադաստիարակչական խնդիրներ և նախագծելու դրանց լուծման ուղիներ:
6. Ուսումնական բանավեճերի ընթացքում հիմնավորելու մանկավարժական հասկացությունները, սկզբունքները, օրինաչափությունները, արտահայտելու սեփական դիրքորոշումներն ու տեսակետները, դրսևորելու համագործակցային և հաղորդակցական կարողություններ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Մասնագիտական միջավայրում դրսևորելու իր մանկավարժական մեթոդաբանական գիտելիքները:
2. Կրթական համակարգում պահպանելու աշակերտ և ուսուցիչ ուսումնական փոխհամագործակցությունը՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները:
3. Մանկավարժական տարաբնույթ իրավիճակներում լուծելու ուսումնական խնդիրներ:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ5.**կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

**Գ1.**պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սաղրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ քննություն***. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
***2-րդ ընթացիկ քննություն***. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
***Եզրափակիչ բանավոր քննություն***. 10 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Մանկավարժությունը որպես գիտություն: Մանկավարժության ուսումնասիրության առարկան, խնդիրները և գործառույթները: **Թեմա 2.** Մանկավարժության մեթոդաբանությունը և գիտահետազոտական մեթոդները: **Թեմա 3.** Անձի սոցիալականացման գործընթացը: **Թեմա 4.** Մանկավարժական գործընթացը որպես համակարգ և ամբողջական երևույթ: **Թեմա 5.** Կրթական համակարգը ՀՀ-ում: **Թեմա 6.** Դիդակտիկան որպես մանկավարժական տեսություն: **Թեմա 7.** Ուսուցման գործընթացը որպես ամբողջական համակարգ: **Թեմա 8.** Ուսուցման օրինաչափությունները, սկզբունքները և դրանց դասակարգումը: **Թեմա 9.** Ուսուցման մեթոդներն ու միջոցները: **Թեմա 10.** Ուսուցմանժամանակակից տեխնոլոգիաներ: **Թեմա 11.** Ուսուցման կազմակերպման ձևերը: **Թեմա 12.** Ուսուցման գործունեության արդյունքների ստուգումն ու գնահատումը: **Թեմա 13.** Դաստիարակության գործընթացի էությունը և բովանդակությունը: **Թեմա 14.** Դաստիարակության սկզբունքները: **Թեմա 15.** Դաստիարակության մեթոդները միջոցները և

| |
|---|
| ձևերը: **Թեմա 16.** Անձի դաստիարակությունը կոլեկտիվում և ընտանիքում: **Թեմա 17.** Անձի համակողմանի և<br>ներդաշնակ զարգացման հիմնական կողմերը: **Թեմա 18**. Գեղագիտական դաստիարակություն: **Թեմա 19.** Աշխատանքային և ֆիզիկական դաստիարակություն: **Թեմա 20.** Դասղեկի աշխատանքը հանրակրթական դպրոցում: **Թեմա 21.** Հանրակրթական դպրոցի կառավարումը և ղեկավարումը: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ամիրջանյան Յու.Ա., Մանկավարժություն, Մանկավարժ. հրատ., Երևան, 2005<br>2. Ղուլումյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 1,Զանգակ-97, Երևան, 2005<br>3. Пидкасистый П.И., Педагогика, Юраит, Москва, 2011<br>4. Подласый И.П., Педагогика, 2002<br>5. Учебник для бакалавров, Юраит, Москва, 2012<br>6. Сластенин В.А., Педагогика: Учебник, Академия, Москва, 2011<br>7. Коджаспирова Г.М., Педагогика: Учебник, Гардарики, Москва, 2007 |

| **1. 0303/B28** | **2. Ընդհանուր հոգեբանություն** | **3. 3 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 30/15/0** | |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է** ծանոթանալ հոգեբանության հիմնական հասկացություններին, մեթոդներին, խնդիրներին և բնագավառներին, գիտելիքների ձեռք բերել հոգեկան գործընթացների, վիճակների և հատկությունների, անձի զարգացման և ձևավորման մեխանիզմների և օրինաչափությունների վերաբերյալ, ինչպես նաև ձեռք բերել հոգեբանական և մանկավարժական գործունեությունն արդյունավետ իրականացնելու գործնական հմտություններ և կարողություններ:<br>**Դասընթացի խնդիրները**.<br>1. տալ ընդհանուր պատկերացում հոգեբանության առարկայի, մեթոդների և ժամանակակից բնագավառների մասին,<br>2. ուսումնասիրել հոգեկան գործընթացների հիմնական տեսակները, դրանց օրինաչափություններն ու առանձնահատկությունները,<br>3. ծանոթանալ ճանաչողական գործընթացների ուսումնասիրության հիմնական մեթոդներին, դրանց կիրառությանն ու գործառույթներին,<br>4. իրականացնել ինքնուրույն տեսական և գործնական ուսումնասիրություններ՝ զարգացնելով հոգեբանության վերաբերյալ տեսական և կիրառական գիտելիքներ: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Բնութագրելու հոգեբանության գիտությունը, նրա զարգացման և ուսումնասիրության բնագավառները,<br>2. Ներկայացնելու հոգեկան գործընթացները, վիճակներն ու հատկությունները, դրանց օրինաչափությունները, անձի զարգացման և ձևավորման առանձնահատկությունները:<br>3. Ձևակերպելու մարդու հոգեկանի սահմանումը, բնութագրելու նրա հիմքերը և կառուցվածքը, թվարկելու նրա գործառույթները:<br>4. Հոգեկանի բովանդակության մեջ առանձնացնելու և քննարկելու հոգեկանի ճանաչողական գործընթացները, ներկայացնելու դրանց կառուցվածքը:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Վերլուծելու և համադրելու հոգեկան գործընթացների, վիճակների ու հատկությունների վերաբերյալ ստացած գիտելիքները, դրանք կիրառելու գործնականում:<br>2. ինքնուրույն կատարելու ուսումնասիրություններ հոգեբանության գիտության, նրա ճանաչողական գործընթացների վերաբերյալ՝ կիրառելով ուսումնասիրած հոգեբանության մեթոդները:<br>3. Վերլուծելու մասնագիտական գրականությունից հավաքագրած տեղեկատվությունը: | | |

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. Կատարելու միջառարկայական վերլուծություններ, համադրություններ և ընդհանրացումներ: Կառուցելու և տրամաբանորեն հիմնավորելու սեփական մտքերը:

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Բ5.**կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

**Գ1.**պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ (պրոբլեմային դասախոսություն, դասախոսություն երկուսով, դասախոսություն պրեսս-կոնֆերանս, դասախոսություն սաղրանք, դասախոսություն խաղային մեթոդների կիրառմամբ),
2. թիմային աշխատանքներ,
3. քննարկումներ,
4. հետազոտական սեմինարներ:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում.*** Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

***2-րդ ընթացիկ ստուգում.*** Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ընդհանուր հոգեբանության առարկան, խնդիրներն ու մեթոդները: **Թեմա 2.** Հոգեբանության կապը այլ գիտությունների հետ, հիմնական բնագավառները: **Թեմա 3.** Հոգեկանը և ուղեղը: **Թեմա 4.** Հոգեկանի ակտիվության մակարդակները: **Թեմա 5.** Անձի հոգեբանական բնութագիրը: **Թեմա 6.** Անձի զարգացում և սոցիալականացում: Ես-կոնցեպցիա: **Թեմա 7.** Իմացական գործընթացներ: Զգայություններ: **Թեմա 8.** Ըմբռնում, առանձնահատկությունները, տեսակները: **Թեմա 9.** Ուշադրություն, ֆիզիոլոգիական հիմքերը, տեսակները: **Թեմա 10**. Հիշողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 11.** Մտածողություն, տեսակները, գործընթացները: **Թեմա 12.** Խոսք և հաղորդակցում: **Թեմա 13.** Երևակայություն և պրոբլեմային իրադրություն, տեսակները: **Թեմա** 14. Անձի հուզակամային ոլորտը: **Թեմա 15.** Անձի անհատական տիպաբանական առանձնահատկությունները՝ խառնվածք, բնավորություն, ընդունակություններ:

**Հիմնական գրականության ցանկ.**


1. Ավանեսյան Հ., Հովհաննիսյան Հ., Ասրիյան Է., Հոգեբանություն, դեմքեր, փաստեր /Ուսումնական ձեռնարկ. Եր. ԵՊՀ հրատ. 2010,204 էջ.
2. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանության հիմունքներ, Ե.1997.
3. Հայրապետյան Դ., Կոգնիտիվ գործընթացների պրակտիկում ԵՊՀ հրատ. Երևան.
4. Психология. Учебное пособие под. Ред. Е. И. Рогова. М., 2005.
5. Маклаков А.Г., Общая психология. М., 2007.
6. Немов Р.С., "Психология: учеб. для студ. высш. пед. учеб. заведений: в 3 кн." М.: Гуманит. изд. центр ВЛАДОС (2003).
7. Столяренко Л.Д., Психология.учебник для вузов.-СПб.: Питер,2010. 592.
8. Столяренко Л.Д., Основы психологии. Ростов-на-Дону, 2005.


| | | |
|---|---|---|
| **1. 0305/B29** | **2. Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում – 3** | **3. 5 ECTS կրեդիտ** |
| **4. 5 ժամ/շաբ.** | **5. 0/75/0** | |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ուսանողին տալ գիտելիքներ ռուսաց լեզվի ուղղագրության (մասնավորապես մակբայների) վերաբերյալ, ռուսաց լեզվի բարդ անշաղկապ նախադասության կետադրության հիմնական կանոնների վերաբերյալ:

| |
|---|
| **9. Դասընթացի ավարտին ուսանողը ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. ներկայացնելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության հիմնական կանոնները,<br>2. բացատրելու ռուսաց լեզվի ուղղագրության և կետադրության կանոնների հիմնական սկզբունքները,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. կիրառելու ստացած գիտելիքները բանավոր և գրավոր խոսքի մեջ,<br>2. մատնանշելու առաջացած խնդիրների լուծման եղանակները,<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ),<br>2. ստեղծագործաբար կիրառելու ստացած գիտելիքները, |
| **10. Դասընթացը ձևավորում է** <u>**կրթական ծրագրի**</u> **հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական<br>դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,<br>**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,<br>**Բ7.** կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ: |
| **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. ինտերակտիվ գործնական պարապմունքներ,<br>2. գրավոր աշխատանքներ՝ թելադրություններ, շարադրություններ, փոխադրություններ,<br>3. բանավոր խոսքի զարգացմանն ուղղված վարժություններ, քննարկումներ: |
| **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***1-ին ընթացիկ ստուգում.*** Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:<br>***2-րդ ընթացիկ ստուգում.*** Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Բարդ և բարդ ածանցավոր բառերի ուղղագրությունը: **Թեմա 2**. Մակբայները և նրանց ուղղագրությունը: **Թեմա 3**. Բարդ նախադասության հիմնական կարգերը: **Թեմա 4**. Բարդ անշաղկապ<br>նախադասություն, նրա կետադրության հիմնական կանոններ և յուրահատկությունները: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Акопян А.В., Газарова Д.Ю., Мкртычян-Лалаян С.А., Русская орфография в упражнениях. Учебное пособие. – Ер.: Изд-во ЕГУ, 2013.<br>2. Акопян К. С., Арзуманян Э.Р., Мартирян Н.И. и др., Практикум по современному русскому языку. – Ер.: Изд-во ЕГУ, 2008.<br>3. Бройде М., Русский язык в диктантах. Нетрадиционный подход. – М.: Рольф, 2000.<br>4. Ласкарева Е.Р., Чистая грамматика. – СПб.: Златоуст, 2012.<br>5. Новикова Л.И., Орфография, морфология, лексика, словообразование, фонетика, культура речи, стилистика: контрольные и проверочные работы по русскому языку: для поступающих в вузы. – М.: Экзамен, 2007.<br>6. Розенталь Д.Э., Голуб И.Б., Русская орфография и пунктуация. – М.: Русский язык, 1990.<br>7. Ткаченко Н.Г., 300 диктантов для поступающих в вузы. – М.: Рольф, 2000.<br>8. Ткаченко Н.Г., Тесты по грамматике русского языка. В 2 ч. М.: Рольф, 2001. |

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B30** | **2. 19-րդ դարի ռուս գրականության պատմություն - 1** | **3. 6 ECTS կրեդիտ** |
| **4. 6 ժամ/շաբ.** | **5. 60/0/30** | |

| | |
|---|---|
| **6. 3-րդ կիսամյակ** | **7. Եզրափակիչ գնահատումով** |

**Դասընթացի նպատակն է** ուսանողների մոտ ձևավորել պատկերացում 19-րդ դարի առաջին կեսի ռուս գրականության ընդհանուր զարգացման գործընթացի մասին, ներկայացնել տվյալ ժամանակաշրջանում գերիշխող գրական ուղղությունները, նրանց միջև տեղի ունեցող գաղափարական վեճերը, լուսաբանել առանձին գրողների ստեղծագործությունը:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. բնութագրելու 19-րդ դարի առաջին կեսի ռուս գրականության պատմամշակութային հենքը և գրական ուղղությունների հատկանիշները,
2. ներկայացնելու դարաշրջանի ռուս հեղինակների ստեղծագործական ուղին և երկերի առանձնահատկությունները,
3. բացահայտելու «ոսկե դարի» գրականության դերը ռուս գրականության հետագա զարգացման գործընթացում,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. նկարագրելու նշված ժամանակաշրջանի գրականության հիմնական հեղինակներին և նրանց ստեղծագործությունները,
2. կատարելու գեղարվեստական տեքստի վերլուծություն սեմինար-պարապմունքների ընթացքում ձեռք բերված հմտությունների հիման վրա,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. պատրաստելու զեկուցումներ և վարելու գիտական բանավեճեր:

**10.Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական
դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա2.**արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

**12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ քննություն.*** բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
***2-րդ ընթացիկ քննություն***. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
***Եզրափակիչ բանավոր քննություն***. 10 միավոր առավելագույն արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. 19-րդ դարի առաջին կեսի քաղաքական և գրական-հասարակական շարժումներն ու հիմնական գրական ուղղությունները: **Թեմա 2**. Ռուսական ռոմանտիզմի բազմազանությունն ու առանձնահատկությունները (Վ.Ժուկովսկի, Կ.Բատյուշկով, պուշկինյան ժամանակաշրջանի բանաստեղծները): **Թեմա 3**. Առակագիր Ի.Կռիլովի և թատերագիր Ա.Գրիբոյեդովի ստեղծագործությունների տեղը և դերը ռուս գրականության զարգացման մեջ: **Թեմա 4**. Ա.Պուշկինի ստեղծագործությունների ժանրային բազմազանությունը (պոեզիա, արձակ, դրամատուրգիա): **Թեմա 5**. Մ.Լերմոնտովի ստեղծագործության տարբեր ժանրերի գեղարվեստական առանձնահատկությունները, ռոմանտիզմի և ռեալիզմի հարաբերակցությունը: **Թեմա 6**. Ն.Գոգոլի ստեղծագործությունների ցիկլային կառուցվածքը և կրոնական ուղղվածությունը:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Манн Ю.В., Литература в первой половине XIX века: [Русская литература] // История всемирной литературы: В 8 томах . Том 6. — М.: Наука, 1989 – с. 284–292.
2. Манн Ю.В., Русская литература XIX века: Эпоха романтизма. М.: РГГУ, 2007.
3. Минералов Ю.И., История русской литературы XIX века (1800–1830-ые годы). М.:Высшая школа, 2007.
4. Якушин Н.И., Русская литература XIX века (первая половина). – М.: Владос, 2001.


| | | |
|---|---|---|
| **1. 0305/B31** | **2. Ժամանակակից ռուսաց լեզվի ձևաբանություն-1** | **3. 6 ECTS կրեդիտ** |
| **4. 6 ժամ/շաբ.** | **5. 60/30/0** | |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7. Եզրափակիչ գնահատումով** | |

**8. Դասընթացի նպատակն է** համակարգված ներկայացնել արդի ռուսերենի բառակազմության եզրերն ու ձևերը, ուսանողների մոտ ձևավորել գիտական հայեցակարգ ռուսերենի ձևաբանանության մասին, մանրամասնորեն նկարագրել երկու կարևորագույն անվանական խոսքի մասերը /գոյական և ածական/:

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. նկարագրելու արդի ռուսերենի բոլոր ձևույթներն ու կարևորագույն բառակազմական ձևերը,
2. հստակ ներկայացնելու իր գիտելիքները անվանական խոսքի մասերի ձևաբանական առանձնահատպությունների մասին,
3. ներկայացնելու տվյալ ոլորտի ժամանակակից հետազոտությունների ձեռքբերումները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

4. տարբերակելու ռուսերենի ձևույթները,
5. նշելու յուրաքանչյուր բառի բառակազմության ձևը,
6. բնութագրելու անվանական բառերն ըստ ձևաբանական հատկանիշների:

**10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական
դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտա-կարգային կապերն ու հարաբերությունները,

**Ա5.**ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

**Բ6.**վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

**11.** **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն,
2. վերլուծողական մեթոդ, որոնողական մեթոդ:

**12.** **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ քննություն.*** բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
***2-րդ ընթացիկ քննություն***. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,
***Եզրափակիչ բանավոր քննություն***. 10 միավոր առավելագույն արժեքով:

**13.** **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Բառակազմություն. ձևույթներ, բառակազմության ձևեր: **Թեմա 2**. Ձևաբանություն ըստ խոսքի մասերի /9 խումբ/. գոյական, ածական:

**14.** **Հիմնական գրականության ցանկ.**

1. Борисова Е.Г., Латышева А.Н., Лингвистические основы РКИ. – М.: Наука, 2003.
2. Земская Е.А., Современный русский язык. Словообразование. – М.: Наука, 2008.
3. Русская грамматика: В 2-х томах. Под ред. Н.Ю.Шведовой. Т. 2. – М.: Наука, 1982.
4. Современный русский язык. Под ред. Белошапковой В.А. – М,: Высшая школа, 1989.
5. Современный русский язык. Морфология. – М.: Русский язык, 2002.

| **1. 0305/B32** | **2.** **Տարրական կրթության մանկավարժություն** | **3. 2 ECTS** **կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 2** **ժամ/շաբ.** | **5. 24/0/6** | |
| **6. 3-**րդ **կիսամյակ** | **7.** **Առանց ընթացիկ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ծանոթացնել ուսանողներին մանկավարժության պատմության զարգացման պատմական փուլերին, առաջավոր փորձին:

**Դասընթացի խնդիրները.**

1. ձևավորել գիտելիքներ կրտսեր դպրոցականների հոգեկան զարգացման հիմնական օրինաչափությունների մասին,
2. ձևավորել տարրական դպրոցի հոգեբանի պրակտիկ գործունեության հմտություններ և կարողություններ:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Բնութագրելու 20-րդ դարի մանկավարժական մտքի պատմության զարգացման հիմնական փուլերը:
2. Բացատրելու մանկավարժական մտքի գիտատեսական հիմքերը, ուսումնասիրության առարկան, օբյեկտը, հետազոտության մեթոդները, հիմնական աղբյուրները:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Օգտագործելու, տեղայնացնելու մանկավարժական առաջավոր փորձը ժամանակակից պայմաններում:
2. Ըմբռնելու 20-րդ դարի մանկավարժական առաջավոր փորձը, մեթոդաբանությունը, աղբյուրները:

Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.

**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

**Բ2.**պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

**Գ1.**պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

| |
|---|
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն<br>2. համագործակցային աշխատանք<br>3. ինքնուրույն առաջադրանքներ/ ռեֆերատ, աշխատանք գական երկերի վրա, էսսե, շարադրություն և այլն/<br>4. սլայդների գործածություն թեմաների ուսուցման ընթացքում<br>5. մտագրոհ և այլն: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Գ.Ի.Գյուրջյանի մանկավարժական տեսությունը, նրա զրույցներն ու ստեղծագործությունները: **Թեմա 2**. Ռ.Շտայների մանկավարժական հայացքները: **Թեմա 3**. Վալդորֆյան դպրոց, կազմակերպումը, առաձնահատկությունները: **Թեմա 4**. Լ.Ս.Վիգոտսկի: Վիգոտսկու մանկավարժական տեսությունը, հիմնական աշխատությունները: **Թեմա 5**. Պ.Բլոնսկու մանկավարժական հայացքները, մանկաբանությունը: **Թեմա 6**. Ս.Շացկու մանկավարժական հայացքների ձևավորումը, նրա հիմնական աշխատությունները: **Թեմա 7**. Մ.Մոնտեսսորիի ազատ դաստիարակության գաղափարները, մեթոդների պատմությունը: **Թեմա 8**. Ջ.Դյուիի տեսությունը, նրա մանկավարժական տեխնոլոգիաները: **Թեմա 9**. Ա.Մասլոուի մանկավարժական գաղափարները, հիմնական աշխատությունները: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Ամիրջանյան Յու.Ա., «Մանկավարժություն», Երևան, 2005 թ, էջ 18.<br>2. Ղուլումյան Գ.Ե., «Մանկավարժություն», գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005 թ.<br>3. Ղուլումյան Գ.Ե., «Մանկավարժություն», գիրք 1-ին, Երևան, 2005 թ, էջ 16.<br>4. Подласый И.П., “Педагогика”, кн. 1, М., “ВЛАДОС”, 2002, с.9.<br>5. Сластенин В.А., “Общая педагогика”, ч. 2, “ВЛАДОС”, М., 2002, с. 11.<br>6. Смирнов В.И., “Общая педагогика в тезисах, дефинициях, иллюстрациях”, Педагогическое общество России, М., 1999, с. 21. |

| | | |
|---|---|---|
| **1. 0304/B33** | **2. Տրամաբանություն** | **3. 2 ECTS կրեդիտ** |
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6. 4-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **8. Դասընթացի նպատակն է** ուսանողների համար ապահովել տրամաբանության դասընթացի հիմնական հասկացությունների և օրենքների ու սկզբունքների իմացություն, որն ունի ինչպես ընդհանուր կրթական, այնպես էլ իմացաբանական ու մեթոդաբանական նշանակություն: Աջակցել ուսանողին բացահայտելու և կատարելագործելու ոչ միայն իր տրամաբանական կարողությունները, այլև ձեռք բերելու գիտելիքներ, որոնք նպաստում են մասնագիտական առարկաների տեսությունների հիմնական հասկացությունների ու կառուցվածքի յուրացմանը, հետազոտական հմտությունների ձևավորմանը: | | |

**9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. բացատրելու մտքի կառուցվածքը,
2. ներկայացնելու տրամաբանական կանոնները և օրենքները, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունն ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը,
3. բացատրելու տրամաբանական գիտելիքի էությունը և գործառնական տեսանկյունները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. մեկնաբանելու տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,
2. ճիշտ կատարելու և գնահատելու հասկացությունների հետ կապված տրամաբանական գործողությունները,
3. կատարելու դատողությունների և անհրաժեշտ մտահանգումների տրամաբանական վերլուծություն և գնահատում:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. դրսևորելու տրամաբանական մտածողության անհրաժեշտ մշակույթ՝ պահպանելով կանոնավոր մտածողության որոշակիության, անհակասականության, հիմնավորվածության և հետևողականության հիմնարար սկզբունքների ու դրանցից բխող մասնավոր նորմերի պահանջները:

**10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտա-**կարգային կապերն ու հարաբերությունները,**

**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն,
2. քննարկում,
3. անհատական աշխատանք:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

***1-ին ընթացիկ ստուգում.*** Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

***2-րդ ընթացիկ ստուգում.*** Գրավոր աշխատանք՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Տրամաբանության առարկան և նշանակությունը: **Թեմա 2**. Բազմատրամաբանության սկզբունքը: Միտք և լեզու: **Թեմա 3**. Հասկացություն: Հասկացության ծավալն ու բովանդակությունը: Հասկացության տեսակները: Տրամաբանական գործողություններ հասկացությունների հետ: Հասկացության ծավալի բաժանման էությունը, տեսակներն ու կանոնները: **Թեմա 4**. Սահմանման էությունը, տեսակներն ու կանոնները: **Թեմա 5**. Դասակարգման էությունը, տեսակներն ու կանոնները: **Թեմա 6**. Դատողության էությունը և կազմը: Պարզ և բարդ դատողություններ, դրանց տեսակները: **Թեմա 7**. Տրամաբանական մտածողության հիմնական օրենքները. որոշակիության, անհակասականության, հետևողականության և հիմնավորվածության պահանջները: **Թեմա 8**. Անհրաժեշտ մտահանգումներ, դրանց տեսակները և կոնոնները. պայմանական, բաժանանարար, լեմատիկ և անմիջական մտահանգումներ:

**14. Հիմնական գրականության ցանկ.**


1. Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ.,Տրամաբանություն: Եր. , 2015:
2. Кириллов В.И., Орлов Г.А.,Фокина Н.И., Упражнения по логике. Учебное пособие. М.,2005.
3. Ивлев Ю.В., Логика. Учебник. 3-е издание. М., 2005.
4. Ивин А.А., Практическая логика. Учебное пособие. М.,2002.
5. А.Гетманова, Логика. 9-ое изд., Москва, 2006.


| | | |
|---|---|---|
| **1. 0303/B34** | **2. Մանկավարժական հոգեբանություն** | **3. 2 ECTS կրեդիտ** |
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 24/6/0** | |
| **6. 4-րդ կիսամյակ** | **7. Առանց ընթացիկ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ուսանողին ծանոթացնել ուսումնական գործընթացի վերլուծության ժամանակակից մոտեցումներին:

**Դասընթացի խնդիրները.**

1. ներկայացնել ուսումնական գործընթացի կառուցվածքը,
2. վերլուծել մանկավարժի անձնային որակների և մասնագիտական պատրաստվածության հիմնախնդիրները,
3. ծանոթացնել մանկավարժական հմտություններին և կարողություններին:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. բնութագրելու մանկավարժական գործունեության դերը ուսումնական գործընթացում,
| **Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական<br>դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,<br>**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,<br>**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտա-կարգային կապերն ու հարաբերությունները,<br>**Ա5.**ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,<br>**Բ6.**վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները: |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. ինտերակտիվ դասախոսություն,<br>2. ձայնագրությունների ունկնդրում և քննարկում: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***1-ին ընթացիկ քննություն***. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,<br>***2-րդ ընթացիկ քննություն***. բանավոր ներկայացման գնահատում՝ 5 միավոր առավելագույն արժեքով,<br>***եզրափակիչ բանավոր քննություն***. 10 միավոր առավելագույն արժեքով: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Պարզ միակազմ նախադասություն: Պարզ միակազմ նախադասության տեսակները: **Թեմա 2**. Թերի նախադասություններ: **Թեմա 3**. Նախադասության իմաստային կառուցվածքը: **Թեմա 4**. Բարդ նախադասություն: Բարդ համադասական նախադասություն. ավանդական և ժամանակակից դասակարգում: **Թեմա 5**. Բարդ ստորադասական նախադասության դասակարգման պատմություն: Բարդ ստորադասական նախադասություն. ժամանակակից դասակարգում: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Белошапкова В.А., Современный русский язык. Синтаксис. – М.: Высшая школа, 1977.<br>2. Русская грамматика / Под ред. Н.Ю. Шведовой и В.В.Лопатина. – Изд. 2-е, испр. М.: Русский язык, 1990. Современный русский литературный язык / Под ред. П. А. Леканта. 5-е изд. М.: Изд-во Юрайт, 2017.<br>*Լրացուցիչ գրականության ցանկ.*<br>3. Золотова Г.А., Онипенко Н.К., Сидорова М.Ю., Коммуникативная грамматика русского языка. Изд. 2-е. М.: Ин-т русского языка РАН, Филологический фак-т МГУ, 2003.<br>4. Русская грамматика. Т. 2. М.: Наука, 1980. |

| | | |
|---|---|---|
| **1. 0302/B47** | **2. Հայ գրականության պատմություն - 1** | **3. 4 ECTS կրեդիտ** |
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 30/0/15** | |
| **6. 6-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է** ուսանողներին ներկայացնել հայ բանահյուսությունը, հայ հին և միջնադարյան գրականությունը՝ բացահայտելով երկերի գաղափարական բովանդակությունը և գեղարվեստական արժեքը, ծանոթացնել հայ հին և միջնադարյան նմուշների թարգմանություններին օտար լեզուներով, ներկայացնել հայ հին և միջնադարյան գրականության մասին օտարալեզու քննադատների կարծիքները և գնահատականները: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. ներկայացնելու հայ հին և միջնադարյան գրականության զարգացման ընթացքը, ըմբռնել ու նրա համաշխարհային նշանակությունը.<br>2. ներկայացնելու տվյալ շրջանի նմուշների օտար լեզուներով կատարած թարգմանություններին, | | |

| |
|---|
| 3. ներկայացնելու և մեկնաբանելու հայ գրականության տվյալ շրջանի վերաբերյալ օտարազգի քննադատությունը,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. ինքնուրույն վերլուծելու և գնահատելու գեղարվեստական երկերը և քննադատական նյութը, մեկնաբանելու գրական ժանրերի առանձնահատկությունները,<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. համակարգելու գրականագիտական վերլուծությունների վերաբերյալ տվյալները,<br>2. օգտագործելու ստացած գիտելիքները ինքնուրույն գիտական աշխատանքում /ռեֆերատներ, զեկուցումներ/: |
| **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,<br>**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,<br>**Գ2.**գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,<br>**Գ3.**զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն, |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. Դասախոսություններ,<br>2. Գործնական պարապմունքներ և քննարկումներ,<br>3. Ռեֆերատ աշխատանքներ,<br>4. զեկուցումներ |
| **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***1-ին ընթացիկ ստուգում***. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,<br>***2-րդ ընթացիկ ստուգում***. գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Հայ ժողովրդական բանահյուսություն. հնագույն էպիկական նմուշները, հիմնական մոտիվները, գեղարվեստական առանձնահատկությունները: «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսը, նրա հատկանշական առնձնահատկությունները: Էպոսը ռուս գրաքննադատության գնահատմամբ: **Թեմա 2**. Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի ստեղծումը: Հայ այբուբենի առանձնահատկությունները և նշանակությունը: Հայ թարգմանական գրականությունը և նրա նշանակությունը: **Թեմա 3**. 5-րդ դարի հայ պատմիչ-գրողները՝ Աղաթանգեղոս, Փ.Բյուզանդ, Եղիշե, Մ.Խորենացի: **Թեմա 4**. Դավթակ Քերթողի «Ողբը…»: **Թեմա 5**. 10-րդ դարի հայ գրականությունը: Վերածնության սկզբնավորումը: Գրիգոր Նարեկացի: Նարեկացու ստեղծագործության համաշխարհային նշանակությունը: Նարեկացին ռուս գրաքննադատության գնահատմամբ: Ներսես Շնորհալու ստեղծագործությունը և նշանակությունը: Հայ միջնադարյան առակագրությունը. Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի: **Թեմա 6**. Հայ միջնադարյան պոեզիան 13-16-րդ դ.դ.՝ Ֆրիկ, Կ.Երզնկացի, Հովհ.Թլկուրանցի, Մ.Նաղաշ, Ն.Քուչակ: Քուչակը ռուսերեն, անգլերեն, լեհերեն և այլ լեզուներով: Օտարազգի ընթերցողները Քուչակի մասին: **Թեմա 7**. 17-18–րդ դարերի հայ պոեզիան. Նաղաշ Հովնաթան, Սայաթ-Նովա: Վ. Բրյուսովը Սայաթ-Նովայի և հայ միջնադարյան գրականության համաշխարհային նշանակության մասին: |

| Հիմնական գրականության ցանկ. |
|---|
| 1. Видные деятели армянской культуры V-XVIII веков. Ереван, изд ЕГУ, 1982.<br>2. Джанполадян М., «Давид Сасунский» в русских переводах и критике». Ереван, 2012.<br>3. Мкрян М., Мовсес Хоренаци. Ереван, 1969.<br>4. Налбандян В., Саринян С., Агабабян С., Армянская литература. Учебник для вузов. М., 1976.<br>5. Читая Нарекаци. Сост. и предисловие Л. Мкртчяна. Ереван, 1997. |

| **1. 0303/B51** | **2. Ներառական կրթություն** | **3. 3 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 18/0/9** | |
| **6. 7-րդ կիսամյակ** | **7. Առանց ընթացիկ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ուսանողների մոտ դաստիարակել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության, դաստիարակության ռազմավարական ուղղությունների գիտակցում, աջակցել ներառման սկզբունքների և քաղաքականության մասին գիտելիքների յուրացմանը:

**Դասընթացի խնդիրները.**

1. ծանոթացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հավասար իրավունքներին,
2. ծանոթացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից օգտվելու հիմնախնդիրներին՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
3. ծանոթացնել երեխայի համակողմանի բնականոն զարգացմանը, նրա կրթության կազմակերպմանը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացմանը:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Ներկայացնելու ներառական կրթության կազմակերպման սկզբունքները, քաղաքականության հիմնական ուղղությունները:
2. Բացատրելու դպրոցի առաքելությունը և բոլոր երեխաներին կրթության մեջ ներառելու քաղաքականության իրագործման հոգեբանամանկավարժական սկզբունքները, մեկնաբանելու դրա իրավական և բարոյաէթիկական հիմնավորումը:
3. Ներկայացնելու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակության և նրանց ուսուցման մեթոդները, տեխնոլոգիաները, հնարները և միջոցները:
4. Բացատրելու և հիմնավորելու առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակության և նրանց ուսուցման գործում դպրոցի և ընտանիքի համատեղ գործունեության կարևորությունը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Ուսումնասիրելու և վեր հանելու կրթական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացում առկա խնդիրները, դժվարությունները և շեղումները, իրականացնելու նրանց ուսուցման և դաստիարակության գործընթացները:
2. Կոնկրետ իրավիճակներում առանձնացնելու երեխաների բարոյական, գեղագիտական և գաղափարական դաստիակության խնդիրները և առաջարկելու դրանց լուծման ճանապարհներ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:
2. Արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում:

| |
|---|
| **10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,<br>**Բ2.**պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,<br>**Գ1.**պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում, |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն<br>2. գործնական աշխատանքներ<br>3. քարտեզագրում<br>4. քառաբաժան<br>5. մտագրոհ<br>6. պրիզմա<br>7. խորանարդում<br>8. շրջագայություն պատկերասրահում<br>9. հնգյակ: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>*Եզրափակիչ բանավոր քննություն.* 20 միավոր առավելագույն արժեքով: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից**.<br>**Թեմա 1.** Ներառման քաղաքականությունը և սկզբունքները: **Թեմա 2.** Երեխաների ներառումը կրթության մեջ: **Թեմա 3.** ՀՀ օրենսդրությունը ներառման քաղաքականության մասին: **Թեմա 4.** Ներառման քաղաքականության իրագործումը Հայաստանում: **Թեմա 5.** Ներառման քաղաքականության շարունակականության ապահովումը ՀՀ կրթական համակարգում: **Թեմա 6.** Ներառական կրթության ազգային ռազմավարական ծրագրի մշակումը որպես հատուկ և հանրակրթական համակարգի միասնական գործառության ապահովման իրավական հիմք: **Թեմա 7.** Ներառման քաղաքականության իրականացման մշտադիտարկումը: **Թեմա 8.** Ներառական կրթության կազմակերպումը: **Թեմա 9.** Ներառական կրթությունը որպես մանկավարժական հիմնախնդիր: **Թեմա 10.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման սկզբունքները: **Թեմա 11.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման մեթոդներն ու կազմակերպման ձևերը: **Թեմա 12.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների արդյունավետ ուսուցման տեխնոլոգիաները: **Թեմա 13.** Դաստիարակության գործընթացի կազմակերպումը ներառական կրթության պայմաններում: **Թեմա 14.** Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների դաստիարակության գործում: **Թեմա 15.** Ուսուցչի շարունակական մանկավարժական կատարելագործումը որպես ներառական կրթության արդյունավետ կազմակերպման միջոց, ներառական կրթության որակի կառավարումը: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության և մասնագիտական կրթությանը վերաբերող ՀՀ օրենսդրության վերլուծությունե, Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE) ծրագիր, 2012 թ.<br>2. Հանրային կարծիքի հետազոտության վերլուծություն հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության վերաբերյալ: Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE) ծրագիր, Երևան, 2012թ.<br>3. Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը Հայաստանում. Կարիքներ և |

խոչընդոտներ.Զեկույց որակական հետազոտության արդյունքների վերաբերյալ: «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագիր և «Հարավային Կովկասում ականներից տուժածների սոցիալ-տնտեսական վերաինտեգրման ծրագիր», Երևան, 2013թ.

4. «ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում» հետազոտությունը: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, 2013թ.
5. Հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու ձեռնարկ: Նախնական/արհեստա-գործական և միջին մասնագիտական հաստատությունների դասավանդողների համար: «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով (LIFE)» ծրագիր, Երևան, 2013թ. համագործակցությունը կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների դաստիարակության գործում:

| **1. 0305/B52** | **2. Ռուսաստանի լեզվաերկրագիտություն** | **3. 2 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 12/6/0** | |
| **6. 7-րդ կիսամյակ** | **7. Առանց ընթացիկ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել լեզվաաշխարհագրական տեսության ընդհանուր և մասնավոր հարցերի հետ, բառապաշարի և ֆոնային գիտելիքների ընդլայնում, զարգացնել պրոֆեսիոնալ հմտությունը՝ազգային և մշակութային բաղադրիչներով օգտագործվելիք լեզվական միավորները տարբերելու համար:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. կիրառելու ռուսաց լեզվի պասիվ բառապաշարի միավորները,
2. կիրառելու ռուսալեզու դիախրոնիկ բառարանները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. ներկայացնելու լեզվաերկրագիտական նյութեր,

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա6.**ներկայացնելու և մեկնաբանելու ռուսերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափություն-ները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, երկրագիտական տեղեկություններ Ռուսաստանի մասին:

**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

**Բ2.**պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն,
2. ինտերակտիվ դասեր,
3. վերարտադրողական մեթոդ,
4. էվրիստիկ /մասնակի որոնողական/ մեթոդ,
5. հետազոտական մեթոդ:

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Եզրափակիչ բանավոր քննություն.*** 20 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Ռուս Ուղղափառ Եկեղեցի՝ պատմական ակնարկ, ՌՈՒԵ-ի տոները, խորհուրդները, դավանաբանական և ժամասացության գրքեր: ՌՈՒԵ-ի վանքերը, որպես հոգևոր մշակույթի կենտրոններ: **Թեմա 2**. ՌԴ-ի աշխարհագրական դիրքը, տարածքը և ազգաբնակչությունը: **Թեմա 3**.

Ռուսաստանի կայսրության, ՌԽՖՍՀ-ի և ՌԴ-ի ադմինիստրատիվ բաժանումը: **Թեմա 4**. Ռուսաց լեզու՝ ռուսերեն բառերի, (անձնանունների, աշխարհագրական անունների), բառակապակցությունների, դարձվածքների ազգամշակութային իմաստները: **Թեմա 5**. Ռուսաստանի պետական կառույցը, արտաքին քաղաքականությունը, կրթությունը: **Թեմա 6**. Ռուսական գեղարվեստ, քանդակագործություն, ճարտարապետություն, երաժշտություն, թատրոն (պատմական ակնարկ, հայտնի գործիչներ):

**Հիմնական գրականության ցանկ.**


1. Булгаков С.В., Православие: Праздники и посты. Богослужение. Требы. Расколы, ереси, секты. Западные христианские вероисповедания. Соборы Восточной, Русской и Западной Церквей. М.: Современник, 1994.
2. Верещагин Е.М., Костомаров В.Г., Язык и культура: Лингвострановедение в преподавании русского языка как иностранного 4-е изд. М.: Рус. яз., 1990.
3. Кондаков И.В., Введение в историю русской культуры. Учебник для вузов. М., 1997.
4. Макаров В.И., Матвеева Н.П., Словарь лексических трудностей художественной литературы. Киев: Рад. шк., 1989.
5. Мир русской культуры. Энциклопедический справочник. М.: Вече, 2000.
6. Христианство: Энциклопедический словарь. В 3-х т. Гл. ред. С.С. Аверинцев. - М.: Большая Российская Энциклопедия. 1993-1995.


| | | |
|---|---|---|
| **1. 0305/B50** | **2. 20-րդ դարի ռուս գրականության պատմություն-2** | **3. 5 ECTS կրեդիտ** |
| **4. 5 ժամ/շաբ.** | **5.**<br>**36/0/9** | |
| **6. 7-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ներկայացնել 20-րդ դարի երկրորդ կեսի ռուս գրականության հիմնական առանձնահատկությունները, տալ հստակ պատկերացում դարաշրջանի կարևորագույն հեղինակների ստեղծագործական ուղու մասին, ծանոթացնել ժամանակաշրջանի ռուս արձակի և քնարերգության լավագույն ստեղծագործություններին:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Նկարագրելու ժամանակաշրջանի ռուս գրականության զարգացման հիմնական փուլերը,
2. բնութագրելու հիմնական գրական ուղղությունները և ներկայացնելու նրանց առաջացման գործոնները,
3. ներկայացնելու ժամանակաշրջանի նշանակալից գրողների երկերը:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. կատարելու տարբեր ժանրերի ստեղծագործությունների թեմատիկ, գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծություն,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. վարելու մասնագիտական բանավեճեր,
2. պատրաստելու ռեֆերատներ,
3. գրելու կուրսային աշխատանքներ:

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական
դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա2.**արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների

արդի հիմնահարցերը,

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն,
2. գործնական պարապմունք,
3. ռեֆերատների ներկայացում և քննարկում:

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,
***2-րդ ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Հետպատերազմյան ժամանակաշրջանի քաղաքական-հասարակական կյանքի մթնոլորտը և գրական գործընթացը: Պատերազմական թեման նշված ժամանակաշրջանի արձակում (Վ.Բիկովի, Վ.Աստաֆևի վիպակները): **Թեմա 2**. Ազգային կյանքի և բնավորության արտացոլումը արձակում (Ֆ.Աբրամովի, Վ.Ռասպուտինի, Վ.Աստաֆևի, Վ.Շուկշինի ստեղծագործությունները): **Թեմա 3**. Բարոյափիլիսոփայական խնդիրները Յու.Տրիֆոնովի, Յու.Նագիբինի, Վ.Մականինի, Ա.Բիտովի ստեղծագործություններում: **Թեմա 4**. Ճամբարային թեման Ա.Սոլժենիցինի երկերում: **Թեմա 5**. Ժամանակաշրջանի պոեզիայի թեմատիկ և գեղարվեստական բազմազանությունը (Ա.Տվարդովսկի, Մ.Դուդին, Ե.Եվտուշենկո, Բ.Օկուջավա, Վ.Վիսոցկի):

**Հիմնական գրականության ցանկ.**


1. Баевский В.С., История русской литературы XX века. Компендиум., М., 2003
2. Зайцев В.А., Лекции по истории поэзии XX века (1940-2000), М., 2009
3. Лейдерман Н.П., Липовецкий М.Н., Современная русская литература. 1980-1990-ые годы. В 2-х томах., М., 2003
4. Русская литература XX века. В 2-х томах (под редакцией Л.П.Кремнецова), М., 2003
5. Серафимова В.Д., История русской литературы XX века.М., 2013


| **1. 0302/B49** | **2. Հայ գրականության պատմություն - 2** | **3. 2 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 12/0/6** | |
| **6. 7-րդ կիսամյակ** | **7. Առանց ընթացիկ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է.**

- ներկայացնել հայ նոր և նորագույն գրականության պատմությունը,
- քննել գրականության զարգացման ընթացքը հայ ժողովրդի քաղաքական, հասարակական և մշակութային կյանքի սերտ կապի մեջ,
- անդրադառնալ նշված շրջանների գրական նմուշների օտար լեզուներով թարգմանություններին.
- ծանոթացնել XIX-XX դ.դ. հայ գրողների և բանաստեղծների մասին օտարազգի քննադատության
- կարծիքներին:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. բնութագրելու հայ նոր և նորագույն գրականության զարգացման ընթացքը, ներկայացնելու նրա ձեռքբերումները.
2. դիտարկելու նշված շրջանների գրական նմուշների օտար լեզուներով կատարած թարգմանությունները.
3. մեկնաբանելու նշված շրջանների որոշ հայ գրողների և բանաստեղծների մասին օտարազգի

քննադատության կարծիքները:

*բ. գործնական մասնագիտական կարողություններ*

1. ինքնուրույն վերլուծելու և գնահատելու գեղարվեստական երկերը և քննադատական նյութը,
2. օգտագործելու ստացած գիտելիքները ինքնուրույն գիտական աշխատանքում /ռեֆերատներ, զեկուցումներ/,
3. մեկնաբանելու գրական ժանրերի առանձնահատկությունները:

*գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*

1. համակարգելու գրականագիտական վերլուծությունների վերաբերյալ տվյալները:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

**Գ2.**գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

**Գ3.**զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Դասախոսություններ,
2. գործնական պարապմունքներ և քննարկումներ,
3. ռեֆերատ աշխատանքներ,
4. զեկուցումներ:

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

*Եզրափակիչ բանավոր քննություն.* 20 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Հայ նոր գրականության սկզբնավորումը. Խ.Աբովյանը՝ հայ նոր գրականության հիմնադիր: Ս.Շերվինսկին՝ «Վերք Հայաստանի» վեպի թարգմանիչ, նրա հոդվածները Աբովյանի մասին: **Թեմա 2** . 50-60-ական թթ. արևելահայ և արևմտահայ գրականության զարգացման հիմնական գծերը /Մ.Նալբանդյան, Ռ.Պատկանյան, Մ.Պեշիկթաշլյան, Պ.Դուրյան/: **Թեմա 3**. 70-80-ական թթ. Ռոմանտիզմի /Րաֆֆի/ և ռեալիզմի /Սունդուկյան, Պարոնյան/ խոշոր ներկայացուցիչները: **Թեմա 4**. 90-ական թթ. հայ արձակը. Ռեալիզմի առաջատար դիրքը /Ալ.Շիրվանզադե/, հոգեբանական արձակը /Նար-Դոս/: **Թեմա 5**. Հովի.Թումանյանը և նրա ստեղծագործությունը: Թումանյանը և ռուս գրականությունը: Ավ.Իսահակյանի պոեզիան և արձակը: Ռուս գրողները Իսահակյանի մասին: **Թեմա 6**. 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ գրականությունը /Զոհրաբ,Վարուժան, Սիամանթո,Մեծարենց/: **Թեմա 7**. Վ.Տերյանի պոեզիայի առանձնահատկությունները: **Թեմա 8**. Հայ նորագույն պոեզիայի սկզբնավորումը և զարգացումը: Ե. Չարենցի ստեղծագործությունը: **Թեմա 9**. Ա.Բակունցի արձակի առանձնահատկու-թյունները: Թեմա 10. 20-րդ 40-50-ական թթ. հայ արձակը և պոեզիան: **Թեմա 11**. 20-րդ 60-80-ական թթ. Հայ գրականության զարգացման հիմնական միտումները: Ռուս թարգմանիչները և քննադատները հայ բանաստեղծների և գրողների մասին:

**Հիմնական գրականության ցանկ.**


1. Габриэлян В., Даниэл Варужан. Ереван, 1991
2. Джанполадян М., «Когда строку диктует чувство...». Ереван, 2006 (статьи о П. Дуряне, Ов.Туманяне, Ав.Исаакяне, Е.Чаренце).
3. Джрбашян Эд., Четыре вершины. М., 1982.
4. Налбандян В., Саринян С., Агабабян С., Армянская литература. Учебник для вузов. М., 1976.

| |
|---|
| Тамразян Г., На литературных путях. М., 1973. |

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B53** | **2.** *Ժամանակակից ռուսաց լեզվի ոճաբանություն* | **3. 4 ECTS կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5. 27/9/0** | |
| **6. 7-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել արդի ռուսերենի բառապաշարի ոճային առանձնահատկություններին և լեզվաարտահայտչական միջոցներին, քերականական ձևերի ոճային առանձնահատկություններին և լեզվաարտահայտչական միջոցներին:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. նկարագրելու ռուսերենի տարբեր ոճերի առանձնահատկությունները,
2. որոշելու ռուսերենի լեզվամիջոցների ոճային պատկանելիությունը,
3. բացատրելու տվյալ լեզվարտահայտչական միջոցի օգտագործման նպատակները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. ճիշտ կողմնորոշվելու տվյալ լեզվամիջոցի օգտագործման հարցում՝ ոճային առումով և ընտրելու ճիշտ տարբերակը,
2. խմբագրելու տարբեր ոճերի տեքստեր,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

կիրառելու գործնական գիտելիքները և իմացությունը մասնագիտական քննարկումների ժամանակ:

**Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա1.**մեկնաբանելու ժամանակակից ռուս բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական
դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Ա4.**ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտա-կարգային կապերն ու հարաբերությունները,

**Ա5.**ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

**Բ6.**վերլուծելու և մեկնաբանելու ռուսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և ռուսերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. ինտերակտիվ դասախոսություն,
2. վերարտադրողական մեթոդ,
3. հետազոտական մեթոդ,
4. էվրիստիկ /մասնակի որոնողական/ մեթոդ,
5. նախագծերի կազմում:

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***1-ին ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,

***2-րդ ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն

| |
|---|
| արժեքով: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Գործառական ոճերը՝ գիտական, պաշտոնական, լրագրային-հրապարակախոսական, գեղարվեստական, խոսակցական: **Թեմա 2**. Լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցները՝ գեղարվեստական մակդրություններ, համեմատություն, փոխաբերություն, հակադրություն, ճարտասանական հարց, դիմում, բացականչություն: **Թեմա 3**. Հնչյունաբանական ոճագիտություն: **Թեմա 4.** Բառագիտական ոճագիտություն: **Թեմա 5**. Ձևաբանական ոճագիտություն: **Թեմա 6**. Շարահյուսական ոճագիտություն: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Голуб И.Б., Стилистика русского языка. – 4-е изд. – М.: Айрис-пресс, 2002.<br>2. Голуб И.Б., Упражнения по стилистике русского языка: Учебное пособие. 3-е изд., испр.М.: Рольф, 2001.<br>3. Лыткина О.И., Селезнева Л.В., Скороходова Е.Ю., Практическая стилистика русского языка: учебное пособие. Флинта. 2009.<br>4. Мартирян Н.И., Сборник заданий по стилистике и культуре речи современного русского языка. Ереван, ЕГУ, 2015.<br>5. Розенталь Д.Э., Лексика и стилистика: Правила и упражнения / Д. Э. Розенталь. М.: Мир и Образование, 2016. |

## ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՄԱ (ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ)

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B54** | **2. Անգլերեն - 3** | **3. 4 ECTS կրեդիտ** |
| **4. 4 ժամ/շաբ.** | **5. 0/60/0** | |
| **6. 3-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է**՝ խորացնել և զարգացնել նախորդ 2 փուլերում ձեռք բերված գիտելիքները, ուսանողների մոտ ձևավորել հաղորդակցության համար անհրաժեշտ գրավոր և բանավոր խոսքի ունակություններ, տեքստի վրա ինքնուրույն աշխատելու կարողություններ:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. Խորացնել, հարստացնել ուսանողների մասնագիտական բառապաշարը:<br>2. Ակտիվացնել բանավոր խոսքը և շփման կարողությունները:<br>3. Զարգացնել անգլերենի ուղղախոսության և ուղղագրության նորմերը, խոսքի մասերի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունները:<br>4. Զարգացնել անգլերենով ազատ հաղորդակցվելու տեխնիկան, ադապտացված տեքստեր ընթերցելու հմտությունը: | | |
| **9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. Ներկայացնելու անգլերենի բառակազմության միջոցները:<br>2. Կիրառելու հոմանիշները, հականիշները և համանունները համատեքստում:<br>3. Գործածելու անգլերենի անդեմ բայերը և դերբայները:<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. Ընդհանրացնելու լեզվի նախնական քերականական և բառապաշարային գիտելիքները:<br>2. Ընթերցելու և վերլուծելու տեքստը՝ կիրառելով ուղղախոսության և շարահյուսության կանոնները:<br>3. Արտահայտելու և հիմնավորելու սեփական կարծիքը, կազմելու գործնական նամակներ:<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. Ունկընդրելու և վերարտադրելու ադապտացված տեքստեր:<br>2. Պատրաստելու ինքնուրույն աշխատանքներ և զեկուցումներ: | | |

| |
|---|
| 3. Բանավիճելու մասնագիտական թեմաներով: |
| **10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Գ2.**գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,<br>**Գ5**. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում: |
| **11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. անհատական և խմբային առաջադրանքներ<br>2. ընթերցանություն<br>3. թեստ<br>4. ռեֆերատ<br>5. դիագնոստիկ ստուգում<br>6. շնորհանդես<br>7. ինքնուրույն աշխատանք |
| **12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***1-ին ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով,<br>***2-րդ ընթացիկ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում՝ 10 միավոր առավելագույն արժեքով: |
| **13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա1.** Ընդհանուր անգլերեն՝ շեշտադրելով բառապաշարի ընդլայնումը **Թեմա 2.** Քերականություն՝ բայի անդեմ ձևեր: **Թեմա 3.** Գրավոր խոսք՝ ուղղված ուսանողների անհատական ստեղծագործական մտքի ու վերլուծական ունակությունների խթանմանը: **Թեմա 4.** Ընթերցանության հմտություններ՝ ուղղված ընթերցանության տարբեր տիպերի ուսումնասիրությանն ու դրանց գործնականում կիրառմանը: |
| **14. Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Harutyunyan K., Mkrtchyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015.<br>2. Mkhitaryan K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017.<br>3. Paterson K., Oxford Living Grammar: Upper Intermediate. Oxford: OUP, 2016<br>4. Mkhitaryan Y., A Basic English Grammar (exercises). Yerevan: Zangak, 2011.<br>5. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010. |

| **1. 0305/B55** | **2. Անգլերեն - 4** | **3. 4 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 0/45/0** | |
| **6. 4-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է** հանրագումարի բերել նախորդ մակարդակներում ստացած գիտելիքները՝<br>դրանք ուղղորդելով դեպի համապատասխան մասնագիտական ոլորտները:<br>**Դասընթացի խնդիրները.**<br>1. Մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստեր:<br>2. Զարգացնել մասնագիտական թեմայով ինքնուրույն կապակցված տեքստ կազմելու կարողությունները:<br>3. Զարգացնել տարբեր բարդությամբ մասնագիտական տեքստեր թարգմանելու կարողություններ: | | |

**10.** Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի`

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. Կազմելու ինքնուրույն խոսք՝ կիրառելով ժամանակների համաձայնության սկզբունքները:
2. Թվարկելու մասնագիտական տերմիններ, ցուցադրելու գիտելիքներ մասնագիտական-տեղեկատվական ոլորտում:
3. Կատարելու տեքստի վերարտադրում սեփական տեսանկյունից` նոր բառապաշարի օգնությամբ:

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. Խոսելու իր մասնագիտությունից, ուսումից, աշխատավայրից, ծրագրերից:
2. Վարելու հեռախոսային զրույց, գրելու էլեկտրոնային նամակ, նշանակել հանդիպումներ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. Ներկայացնելու բանավոր զեկուցում կամ նախագիծ:
2. Բանավիճելու մասնագիտական թեմաների շուրջ:

**10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Գ2.** գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

**Գ5**. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

**11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. անհատական և խմբային առաջադրանքներ
2. ընթերցանություն
3. թեստ
4. ռեֆերատ
5. դիագնոստիկ ստուգում
6. շնորհանդես
7. ինքնուրույն աշխատանք

**13. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

Նախատեսված ***2 ընթացիկ ստուգումներից*** յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 10 միավոր:

***1-ին ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում, 10 միավոր առավելագույն արժեքով,

***2-րդ ստուգում.*** գրավոր աշխատանքի գնահատում, 10 միավոր առավելագույն արժեքով:

**14. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ընդհանուր անգլերեն՝ ուղղված ուսանողների անգլերենի բառապաշարը հարստացնելուն և տարբեր հարցերի շուրջ անգլերենով հաղորդակցվելուն: **Թեմա 2.** Քերականություն՝ շարահյուսություն: **Թեմա 3**. Լեզվաբանական տեքստերի թարգմանության առանձնահատկությունները: **Թեմա 4**. Պաշտոնական գրագրություն, ինքնակենսագրություն, դիմում, մոտիվացիոն նամակ:

**15. Հիմնական գրականության ցանկ.**


1. Harutyunyan K., Mkrtchyan H., Bagumyan L., Do you Speak English? Yerevan, Lusakn, 2015.
2. Mkhitaryan K., Gevorgyan A., Develop Your Vision of English. Yerevan: Antares, 2017.
3. Paterson K., Oxford Living Grammar: Upper Intermediate. Oxford: OUP, 2016.
4. Mkhitaryan Y., A Basic English Grammar (exercises). Yerevan: Zangak, 2011.
5. Vince M., First Certificate Language Practice. USA: Macmillan, 2010.
6. Zemach, D. E. Academic Writing from Paragraph to Essay. USA: Macmillan, 2011.


| | | |
|---|---|---|
| **1. 0305/B56** | **2.** Հայ-ռուս գրական կապեր | **3. 3 ECTS** կրեդիտ |
| **4. 2** ժամ/շաբ. | **5. 30/0/0** | |

| 6. 5-րդ կիսամյակ | 7. Առանց ընթացիկ գնահատման |
|---|---|

**Դասընթացի նպատակն է** ուսանողների մոտ ձևավորել պատկերացում ռուս-հայկական գրական և մշակութային կապերի և ազգային գրականության առանձնահատկությունների ու զարգացման ընդհանուր ուղիների մասին, ինչպես նաև նրանց մոտ զարգացնել պատմամշակութային ու գրականագիտական վերլուծության հմտություններ:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. ճանաչելու ռուս գրողների ստեղծագործությունները Հայաստանի մասին,
2. ներկայացնելու գրողների կենսագրությունը,
3. ներկայացնելու տեսական և մշակութային հիմնադրույթները, որոնք նպաստել են հայ-ռուսական գրական կապերի զարգացմանը,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. գնահատելու և բնութագրելու նշված գրողների ստեղծագործական ուղին,
2. վերլուծելու և մեկնաբանելու գեղարվեստական բնագրերը,
3. մեկնաբանելու հայ-ռուսական գրական կապերի զարգացման օրինաչափությունները,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. կատարելու ինքնուրույն աշխատանք առաջարկվող գրականության հետ,

վերլուծելու նշված գեղարվեստական բնագրերը:

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա2.**արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ռուսերենով (առնվազն B2) ու մեկնաբանելու նրա առանձնահատկությունները, տարբերակելու ռուսական մշակույթը, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ռուսաստանի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություն
2. քննարկում
3. հարցում
4. բանավեճ
5. խմբային աշխատանք
6. բառային աշխատանք

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Եզրափակիչ . բանավոր քննություն***. 20 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ռուս-հայկական մշակութային և գրական կապերի ընդհանուր նկարագիրը: **Թեմա 2.** Գրական հարաբերությունների զարգացման հիմնական փուլերը **Թեմա 3**. Կապերը Կիևյան դարաշրջանում: Ռուս-հայկական մշակութային հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները Պետրոս 1-ի օրոք: **Թեմա 4**. Ռուս-թուրքական պատերազմների ազդեցությունը գրական հարաբերությունների վրա: **Թեմա 5.** Հայագիտության ծագումն ու զարգացումը Ռուսաստանում: Կապերը 19-րդ դարում: Գրիբոեդովի դերը գրական և մշակույթային կապերի պատմության մեջ: Պուշկինը և Հայաստանը: **Թեմա 6.** Կապերը 20-րդ դարում: **Թեմա 7**. Վ.Բրյուսովի դերը կապերի զարգացման հարցում: **Թեմա 8.** Հայաստանի «բացահայտումը» Ի.Մանդելշտամի ստեղծագործություններում: **Թեմա 9.** Հայաստանի կերպարը ռուս գրողների ստեղծագործություններում /Ա.Բելյի, Ն.Տիխոնով/: **Թեմա 10.** Գրական կապերի զարգացումը 20-րդ դարի 2-րդ կեսում: **Թեմա 12.** Մ.Մատուսովսկու, Վ.Զվյագինցեվայի, Մ.Դուդինի, Բ.Չիչիբաբինի

| |
|---|
| հայկական պոեզիան: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Алексанян Е., Движение литературы, -Ер., 1985<br>2. Алексанян Е., Путь к дому, -Ер., 1996<br>3. Веселовский А., Об Армении и армянской культуре. –Ер.,1970<br>4. Веселовский Ю.А., Очерки армянской литературы, истории и культуры. –Ер., 1972<br>5. Гачев Г., Национальные образы мира. –М76 1988<br>6. Григорьян К.Н., Из истории русско-армянских литерурных и культурных отношений. –Ер., 1974<br>7. Мкртчян Л., Армиянская поэзия и русские поэты 19-20 веков. Вопросы перевода и литературных отношений. –Ер.,1968<br>8. Мкртчян Л,. Добро вам. –Ер., 1974<br>9. Мкртчян Л., Черты родства. –Ер., 1973<br>10. Пушкин и литература народов советского союза. Сост. К.Айвазян –Ер., 1975<br>*Художественная литература*<br>5. Белый А., Армения.очерки, письма, воспоминания.<br>6. Битов А., Уроки Армении<br>7. Брюсов В., Об Армении и армянской культуре.<br>8. Брюсов В., Летопись исторических судеб армянского народа<br>6. Грибоедов А., Путевые записки.<br>7. Гроссман В., Добро вам!<br>8. Дудин М., Земля обетованная.<br>9. Звягинцева В., Моя Армения.<br>10. Мандельштам О., Армения. Путешествие в Армению.<br>11. Матусовский М., Строки из горячего тонира.<br>12. Пушкин А., Путешествие в Арзрум.<br>13. Чичибабин А., Псалмы Армении. |

| **1. 0305/B56** | **2. Ռուս հատկանունաբանություն** | **3. 3 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 30/0/0** | |
| **6. 5-րդ կիսամյակ** | **7. Առանց ընթացիկ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն** ծանոթացնել ուսանողներին ռուս հատկանունաբանության հիմնական հասկացություններին, հիմնական տեսություններին, իմաստային և ոճային առանձնահատկություններին, լեզվամշակութաբանական առանձնահատկություններին: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. նկարագրելու հատուկ անունների կիրառությունը,<br>2. բացատրելու հատուկ անունների ծագումնաբանությունը,<br>3. մատնանշելու տեղանունները և անձնանունները,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>1. ներկայացնելու և մեկնաբանելու ռուս հատկանունաբանությունը,<br>2. գտնելու համապատասխան հայերեն զուգահեռները,<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***<br>1. ստեղծագործաբար և արդյունավետ կիրառելու ստացած գիտելիքները: | | |

| |
|---|
| **Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**<br>**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,<br>**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,<br>**Գ4.**օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը, |
| **Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**<br>1. դասախոսություն,<br>2. վերարտադրողական մեթոդ,<br>3. էվրիստիկ /մասնակի որոնողական/ մեթոդ,<br>4. հետազոտական մեթոդ: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**<br>***Եզրափակիչ բանավոր քննություն***. 20 միավոր առավելագույն արժեքով: |
| **Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**<br>**Թեմա 1**. Ռուս հատկանունաբանության հիմնական հասկացությունները: **Թեմա 2**. Ռուս հատկանունաբանության հիմնական տեսությունները: **Թեմա 3**. Ռուսական անձնանունների առանձնահատկությունները: Ռուսական անձնանունների համեմատությունը հայկական անձնանունների հետ. դրանց նմանությունն ու տարբերությունները: **Թեմա 4**. Ռուսական տեղանունների առանձնահատկությունները: Ռուսական տեղանունների համեմատությունը հայկական տեղանունների հետ. դրանց նմանությունն ու տարբերությունները: |
| **Հիմնական գրականության ցանկ.**<br>1. Беленькая В.Д., Топонимы в составе лексической системы языка. М., 1969.<br>2. Никонов В.А., Имя и общество. М., 1974.<br>3. Общая теория имени собственного. М., 1973.<br>4. Рылов Ю.А., Антропонимы в языковой картине мира. Тула, 2002.<br>5. Суперанская А.В., Современные русские фамилии. М., 1981.<br>6. Суперанская А.В., Общая теория имени собственного. М., 1973. |

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B57** | **2. Ռուս մանկական գրականություն** | **3. 3 ECTS կրեդիտ** |
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 30/0/15** | |
| **6. 6-րդ կիսամյակ** | **7. Առանց ընթացիկ գնահատման** | |
| **Դասընթացի նպատակն է** ուսանողներին ծանոթացնել ռուս մանկական գրականության հետ, ուսումնասիրել մանկական գրականության կայացման և զարգացման պատմությունը, բացահայտել մանկական գրականության թեմատիկ և ժանրային առանձնահատկությունները, ծանոթացնել ռուս մանկական գրականության լավագույն երկերի հետ, ձևավորել տեքստի գրականագիտական վերլուծության հմտություններ: | | |
| **Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>1. ներկայացնելու մանկական գրականության առանձնահատկությունները և նրա կապերը մշակույթի այլ ճյուղերի հետ,<br>2. ներկայացնելու և բնութագրելու ռուս մանկական գրականության զարգացման հիմնական փուլերը,<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>*1.* որոշելու մանկական ստեղծագործությունների և բանահյուսության ժանրային պատկանելիությունը,<br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ*** | | |

1. գնահատելու մանկական ստեղծագործությունների կրթական և դաստիարակչական ներուժը,
2. վերլուծելու մանկական ստեղծագործությունները:

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա4.** ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

**Բ1.** վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

**Գ2.** գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,

**Գ3.** զուգադրելու ռուսերենի և հայերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. Տեքստի ընդհանուր և քերականական վերլուծություն
2. Հարցում
3. Բանավեճ
4. Խմբային աշխատանք
5. Բառային աշխատանք
6. Երկխոսություն

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

*Եզրափակիչ բանավոր քննություն.* 20 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1.** Ռուս մանկական գրականության ծագման և զարգացման փուլերը X-XVIIդդ.: **Թեմա 2.** XIXդ. ռուս մանկական գրականություն: **Թեմա 3.** XXդ. առաջին կեսի ռուս մանկական գրականություն: **Թեմա 4.** XXդ. երկրորդ կեսի ռուս մանկական գրականություն: **Թեմա 5.** Արտասահմանյան մանկական գրականություն: **Թեմա 6.** Ռուսերեն թարմանված հայ մանկական գրականություն:

**Հիմնական գրականության ցանկ.**


1. Минералова И.Г., Детская литература. – М.: Юрайт, 2016. – 624 с.
2. Путилова Е.О., Детская литература. – М.: Академия, 2016. – 582 с.
3. Арзамасцева И.Н., Николаева С.А., Детская литература. – М.: Высшая школа, 2009. – 472 с.
4. Кудрявцева Л.С., Художники детской книги. - М.: Просвещение, 1998. – 347 с.
5. Мельников М.Н., Русский детский фольклор. -М.: Прогресс, 1987. – 386 с.
6. Рассказы об авторах ваших книг. XX век. /Под ред. М.И.Мещеряковой. — М.: Просвещение, 1997. – 473 с.
7. Русская литература для детей. /Под ред. Т.Д.Полозовой. — М.: Просвещение, 1997. – 462 с.
8. Русские детские писатели XX века: биобиблиографический словарь. /Под ред. А.В.Терновского. — М.: Прогресс, 1997. – 534 с.
9. Сетин Ф.И. История русской детской литературы, конец X - первая половина XIX в. - М.: Высшая школа, 1990. – 468 с.

| | | |
|---|---|---|
| **1. 0305/B57** | **2. Ռուս-հայերեն թարգմանության խնդիրներ** | **3. 3 ECTS կրեդիտ** |
| **4. 3 ժամ/շաբ.** | **5. 30/15/0** | |
| **6. 6-րդ կիսամյակ** | **7. Առանց ընթացիկ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է՝**

- ներկայացնել ռուսերենից հայերեն թարգմանությունների տեսական և գործնական սկզբունքներն ու մեթոդները,
- համակարգել գործնական հմտություններ և կարողություններ կիրառելու հիմնական ուղղությունները,
- դասընթացի ընթացքում զարգացնել սովորողների գրավոր և բանավոր թարգմանչական գործնական ունակությունները:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. մեկնաբանելու ռուս-հայերեն թարգմանության գործնական առանձնահատկությունները,
2. ներկայացնելու մասնագիտական բնագրերի ընթերցման և թարգմանության սկզբունքները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. նախաընթերցելու և արագ թարգմանելու մասնագիտական բնագրեր,
2. կատարելու մասնագիտական բնագրերի գործնական թարգմանություններ, համադրական-զուգադրական վերլուծություններ:

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

1. պատրաստելու զեկուցումներ երկլեզվյան թարգմանության գործնական խնդիրների վերաբերյալ:

**Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.**

**Ա3.**կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Ա5.**ներկայացնելու ռուսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

**Բ1.**վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, ռուսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

**Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.**

1. դասախոսություններ,
2. մասնագիտական բնագրերի համադրական-զուգադրական վերլուծություններ և քննարկումներ
3. մասնագիտական բառարանների կիրառում:

**Գնահատման մեթոդները և չափանիշներն են.**

***Եզրափակիչ բանավոր քննություն.*** 20 միավոր առավելագույն արժեքով:

**Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.**

**Թեմա 1**. Ռուսերենից հայերեն թարգմանությունների լեզվաոճական առանձնահատկություններն ու թարգմանական սկզբունքները: **Թեմա 2**. Մասնագիտական թարգմանության տարբեր տեքստերի նախաընթերցում և վերլուծություն: **Թեմա 3**. Մասնագիտական բնագրերի գործնական թարգմանություններ, համադրական-զուգադրական վերլուծություններ:

**Հիմնական գրականության ցանկ.**


1. Алексеева И.С., Профессиональный тренинг переводчика.Спб.-2001.
2. Брандес М.П., Провоторов В.И., Предпереводческий анализ текста. Курск.-1999.
3. Комиссаров В.Н., Теория перевода. М., 1990.
4. Латышев Л.К., Технология перевода. Учебное пособие по подготовке переводчиков.2000.
5. Федоров А.В., Основы общей теории перевода. М., 1983.

| |
|---|
| 6. Пумпянский А.Л., Введение в практику перевода научной и технической литературы.М., 1981. |

| **1. 0305/B58** | **2. Գրականագիտական վերլուծության հիմունքներ** | **3. 3 ECTS կրեդիտ** |
|---|---|---|
| **4. 2 ժամ/շաբ.** | **5. 18/0/0** | |
| **6. 7-րդ կիսամյակ** | **7. Առանց եզրափակիչ գնահատման** | |

**Դասընթացի նպատակն է** ծանոթացնել ուսանողներին գրական տեքստի վերլուծության հիմնական մեթոդներին, ձևավորել ուսանողների մոտ տեքստի վերլուծության և մեկնաբանման կարողություններ:

**Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝**

***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***

1. մեկնաբանելու գեղարվեստական տեքստի վերլուծության նպատակները,
2. ներկայացնելու գեղարվեստական տեքստի վերլուծության արդի մեթոդները,

***բ. գործնական մասնագիտական կարողություններ***

1. վերլուծելու գրական ստեղծագործությունը որպես ամբողջականություն,
2. մեկնաբանելու գրական ժանրերի առանձնահատկությունները,
3. տարբերակելու գրական ստեղծագործության առանձնահատկությունները,
4. վերլուծելու գրական տարբեր ստեղծագործություններ,

***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ***

